

Hentchak :

Organe Central
DU PARTI
HENTCHAKISTE

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien
mensuel
XXI Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ն Ո Ր Ա Գ Ո Յ Ն Թ Ի Ի Ր Ք Ի Ա Ն

Թիւրքիան այժմ ունի իր «Սահմանադրութիւն»ը: Ետերը մինչև վերջ յոռետես մնացին, կարծելով թէ Յուլիս 11-ի ժողովրդային չաղթութիւնը պետական մի հարուածով ի դերև պիտի հանուէր և դարձեալ Հին բռնապետական Թիւրքիան իր կեանքը վերսկսէր:

Որ Թիւրքիան այժմ ունի իր «Սահմանադրութիւն»ը և յոռետեսութիւնը այլևս շարունակ թուտարած չպիտի թագաւորի, սպառնաց դրան, մտածում են, որ «Պարլամէնտ»ը արդէն գումարուած է:

Արեւմտեան, լաւատեսների կարծիքով, Նորագոյն Թիւրքիա ստեղծուելու շրջանի մէջն ենք մտել, որովհետև ունինք մի «Սահմանադրութիւն», և «Երկրի ներկայացուցիչները» հաւաքուած են միասեղ՝ նոր իրաւակարգ վերստեղծելու համար:

— Բաղաքական խնդիրների մէջ լաւատեսութիւն, յոռետեսութիւն՝ դրանք նշանակութիւն չունին: Հարկաւոր է փաստերը, իրողութիւնները մի առ մի վեր առնել, քննութեան ենթարկել, վերլուծել և պայքարը առաջ տանել: Ո՛չ յոռետես, ո՛չ էլ լաւատես, այլ պայքարող, մաքառող, կռուող, կազմակերպուած ոչ ժ. այդ պայմանով է միայն որ կարելի է նոր մի բան ունենալ և դիպուած պահանջներին բաւականութիւն տալ:

Սուլթանը հարկադրուեցաւ «Սահմանադրութիւն»ը վերահաստատել. բայց այն «Սահմանադրութիւն»ը որով օժտուած է այժմ Թիւրքիան, որպէս մի երկրի հիմնական օրէնքների աղբիւր, — բերձ է, տալիս է նա ժողովրդին այն բոլոր իրաւունքները, որ կարելի լինի ասել թէ արդարև Սահմանադրութիւն ունինք՝ այս բառի իսկական և լայն իմաստով: — Ո՛չ:

Առաջները՝ որպէս բացարձակ իշխանութեան ներկայացուցիչ՝ Սուլթանները երկիրը վարել են այնպէս, ինչպէս որ իրենք են հասկացել: — Օրէնք, կարգ ու կանոն, ամէն ինչ իրենք քմահաճոյքից է կախուած ունեցել. նրանք ո՛չ հաշիւ ունեին տալիք և ո՛չ էլ պատասխանատուութիւն. նրանք ա մ է ն ինչ էին: Երկրի մէջ եղած քաղաքական, տնտեսական ամէն հաստատութիւն իրեն հիմունք ունէր Սուլթանականութիւնը: — Այդպէս էր անցեալների մէջ:

Եկաւ «Կանունի Էսասափ»ն, «Միդհատեան Սահ-

մանադրութիւնը», ինչպէս աւոււււ է սովորաբար: Արդ՝ նա ի՞նչ է բերում:

Թուրքերէն վերտառութիւնը՝ «Կանունի Էսասափ», աւելի է պարզում իրականութիւնը, քան թէ սահմանադրութիւն եզրը:

«Կանունի Էսասափ» ասել է «Հիմնական օրէնք» — այսինքն մէջտեղ են եկել մի սրոշեալ սկզբունքներ, որոնք հիմունք պիտի ծառայեն երկրի քաղաքական և տնտեսական կազմին, և հետեւաբար ամէն միւս օրէնքները այդ «Հիմնական» օրէնքներից պիտի բխեն:

Բայց այդ «Հիմնական օրէնքները» (Կանունի Էսասափ) կազմուել են առանց ժողովրդի կամքին և նախնական համաձայնութեանը:

Սուլթան Համիդը և իր նախորդները մինչև «սահմանադրութեան» սկզբնական թուականը՝ երկիրը կառավարել են այն սկզբունքների և իրաւունքի վրան, որոնք բղխում են թէօկրատիայից (աստուածպետութիւնից): Այդտեղ ո՛չ մի վերահսկողութիւն ժողովրդի կողմից, ո՛չ մի հաշիւ ժողովրդին: Սուլթանները համարուել են բացարձակ տէր, որոնք կամքը եղել է սուրբ և օրէնքի անքննադատելի աղբիւր:

Այն «սահմանադրութիւն»ը, որով երեսուն և երկու տարի առաջ օժտուած է եղել Թիւրքիան և որը հիմա երկրի պետական կազմի «Հիմնական օրէնքներն» է իր մէջ ամփոփում, — նա չի բերում ճշմարիտ սահմանադրութիւն:

Եւ արդարև, ի՞նչ է սահմանադրութիւն. — «Սահմանադրութիւնը մի պայման է, ասում է Լասսալ, որ երզումով կնքուած է միապետի և ժողովրդի միջև ու դառնում է երկրի հիմնական օրէնքը»:

Առնենք սահմանադրութիւն եզրը հէնց իր այս սահմանափակ նշանակութեան մէջ, որ ամէնից աւելի կարող է չարմարել սահմանադրական միապետական երկրներին:

Եթէ «սահմանադրութիւնը մի պայման է որ կնքուած է ժողովրդի և միապետի միջև», — այդտեղից հասկանալի է, որ արդի «պայմանը» մէջտեղ եկած պիտի լինէր երկու կողմերի համաձայնութեամբ և հաւանութեամբ. այդպէս պիտի լինէր, որ շատ ու քիչ բաւականութիւն տար ժողովրդական պահանջին և սահմանադրական մտքի հասկացողութեանը:

Մինչդեռ այն «պայմանը», որ այսօր երկրի «հիմ-

նական օրէնքն՝ է համարում՝ երևան է եկել կողմերից միայն մէկի համաձայնութեամբ, — ուրիշ խօսքով «պայմանը» միակողմանի է (unilatéral), այն ինչ իրօք պիտի լինէր երկկողմնական (bilatéral), որպէսզի շատ ու քիչ բաւականութիւն տար բառի իսկական իմաստին :

Եւ երբ պատմականօրէն որոշ է, որ այդ «պայմանը», այդ « սահմանադրութիւնը » մշակուել, խմբագրուել է մի այնպիսի յանձնաժողովից, որ ն շ ա ն ա կ ու ա ծ է եղել Սուլթանի կողմից, պարզ է, ուրեմն, որ խմբագրողները ինչ կապերով են կապուած եղել Տիրոջ Տան և Անձի Հետ, — և այդտեղից այն եղբակացութիւնը միայն կարելի է հանել թէ « Հիմնական օրէնքները » իրենց գոյութեան մէջ դարձեալ եկել են ապահովելու Քահակարդ Տան և ն ր ա ն ե ց ու կ ը Հ ա ն դ ի ս ա ց ո ղ ո յ ժ եր ի շ ա հ ը և տ ի ր ա պ ե տ ու թ իւ ն ը :

Եւ արդարեւ, ներկայ « սահմանադրութեան » 7-րդ և 9-րդ յօդուածները կասկածանքի նշոյլ անգամ չեն թողնում, որ այդ « պայմանը » պարզապէս վերևից եկած մի հրաման է, որ երկրի քաղաքական, անտեսական գործերը առաջ տարուին այնպէս, ինչպէս որ պահանջում է սուլթանական ոյժը մարմնացնողների շահը :

Մինչև որ ամբողջապէս չջնջուին «Սահմանադրութեան » 7-րդ և 9-րդ յօդուածները, — ճշմարիտ սահմանադրութեան մասին խօսք լինել չի կարող :

Իսկ այդ կլինի այն ժամանակ, երբ միահեծան ժողովուրդը ինքը ասպարէզ կմտնի և իր սեպհական պահանջները մէջտեղ բերելով նրանց շուրջը համաձայնութիւն կայացնել կտայ և վարից իր պայմանը « Վերինին » կթեկադրի, — եթէ սա պահել ուզուի :

Իրաւագիտական տեսակետով Սուլթանը գծել է Հիմնական օրէնքների մի որոշեալ շրջանակ և ժողովրդին դրել է այդ շրջանակի մէջը. նա այնքան իրաւունքներ է տուել, որքան որ դա ցանկալի և հնարաւոր էր իր շահի տեսակետից :

Ժողովրդին տուածը միայն խորհրդակցական մի ձայն է, ուրիշ ոչինչ :

Ե՛րբ է, որ իսկական սահմանադրութիւն կցառաջանայ: — Այն ժամանակ; երբ միատեղ եկած ժողովրդի լիազօր ներկայացուցիչները իրենք կգծեն Հ ի մ ն ա կ ա ն օր է ն ք ն եր, համապատասխան ժողովրդական շահերին և Քոնստանդուպոլիսի Իշխանութեան ներկայացուցչին « Սուլթանին » կթեկադրեն այդ պայմաններին համաձայնաբար և լրատ այնմ վարուել — այդ ժամանակն է, ահա՛, որ իրական սահմանադրութիւն տեղի կունենայ, որովհետև ժողովուրդը ինքը կորոշի « Վեհապետի » իրաւունքի սահմանները և ինքը կգծի որոշեալ մի շրջանակ, ու « Վեհապետին » կտալի այդ շրջանակի մէջը մտալ և վաչե ել միայն այն իրաւունքները, ինչոր ժողովուրդը նրան կտա :

Մինչև ցարդ տիրողը եղել է սուլթանական Միա-

հեծանութիւնը, — իրական սահմանադրութեան տիրապետութիւնը կլինի այն ժամանակ, երբ ժողովրդական միահեծանութիւնը կտրի :

Ժողովուրդը ինքն է, որ օրէնքի աղբւրը պիտի նկատուի և ամէն իշխանութիւն նրանից է որ ծագումն պիտի առնէ. — մինչև որ այս սկզբունքը չաղթող չհանդիսանայ և տիրապետող չլինի՝ իրական սահմանադրութեան մասին խօսք լինել չի կարող :

Ներկայ «սահմանադրութեամբ» սուլթանական միահեծանութիւնը դեռ բոլորովին խորտակուած չէ. առանց ժամանակ կորցնելու, որպէսզի թոյլ չտրուի սուլթանականութեան ծառաներին որևէ հանգամանքից օգտուելու և իրենց դիրքը էլ աւելի ամրապնդելու, հարկաւոր է օգտուիլ ներկայացած պատեհ առիթից՝ կիսատ-պուատ « Աղբալին ժողովը » Հիմնապիւր ժողովի վերածել և այդպիսով ընդհանուր երկրի Հիմնական օրէնքները դնել ժողովրդական միահեծանութեան ըսկզբունքի վրան : Երբ այդ սկզբունքը կիրաւութեան կմտնի՝ իր բոլոր արտայայտութեանց մէջ, այն ժամանակ միայն կարելի է ասել որ արդարեւ սահմանադրութիւն կայ և Թիւրքիան Նորագոյն է, իսկ մինչ այդ պայքարը պէտք է շարունակել իր ամէն ձևերի մէջ, որովհետև ՏԻՐՈՂ ՈՅԺԵՐԸ դարձեալ իրենց դիրքերի վրան են :

Թ Ի Ի Ր Ք Ի Ա Յ Ո Ւ Մ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՍՅԵԱՅՔ

Թիւրքիայի տարածութեան վրայ ծագած քաղաքական խնդիրները կոչուած էին Արեւելեան Խնդիր : Ուրիշ խօսքով Արևելեան խնդիրը Թիւրքիայի գոյութեան, ոչ-գոյութեան, ո՛ր մասը որի՛ն պատկանելու խնդիրն էր :

Մինչև վերջերս, պատմութեան ամբողջ տեսութեան ընթացքում, աւելի քան երեք հարիւր տարի է, որ Արևելեան Խնդիրը վճռուած էր այն ուղղութեամբ և այն բնաւորութեամբ՝ որպէս թէ Թիւրքիան օրին մէկը անպատճառ պիտի ընկնէր, պիտի գաղաթէր գոյութիւն ունենալուց : Եւ այդպէս մտածողներից ամէն մէկը բերում էր իր փաստերը և եղբակացութիւնները : Ու այդ Հիմունքով, պատմութեան ճատակարարած իրողութիւնների համաձայն՝ Թիւրքիայի ժառանգորդներն էին ուղում լինել մի կողմից արտաքին պետութիւնները, մեւ կողմից բաղկացուցիչ ազգութիւնները : Շատերն էլ առաջարկում էին, ցոյց տալով իրերի արդէն առած ընթացքը, Թիւրքիան պահպանել համաօրրապետութեան (condominium) եղանակով, որով դարձեալ Թիւրքիան իսկական Թիւրքիա լինելուց դադարում էր :

Յուլիս 11-ից յետոյ մի փոքր շունչ առան նրանք, որոնք ցանկանում էին ստեղծել մի այնպիսի Թիւրքիա, որ ո՛չ միայն սարէր որպէս պետութիւն, այլ նրա քաղաքական և անտեսական կազմը լինէր այն տեսակ, որ նա իրաւամբ դառնար Նոր Թիւրքիա, — այսինքն մի պետութիւն, որ ժամանակակից քաղաքակրթութեան շաւղի մէջը մտնէր և այդպիսով ո՛չ բաղկացուցիչ ազգութիւնները անջատման միտու և պատճառ ունենային և ո՛չ էլ արտաքին պետութիւնները անկարելի կարգ Թիւրքիան փաստ բռնելով

նուաճողականութեան սուրը շարունակ նրա գլխին շղթայէին :

Պատմական այդ թէգերից ո՞րը յաղթող կհանդիմանայ, — ուրիշ ասացածով՝ Արեւելեան Խնդիրը այսուհետեւ էլ կընթանայ առաջուհան ձևով, թէ նոր այն ճանապարհով, որ գծուած է Յուլիս 11-ից յետոյ : Սա է այն պրօբլէմը (խնդիրը), որ պրօբլէմ է կեանքի առաջ :

Նրանք՝ որոնք ժխտում են նուաճողականութեան քաղաքականութիւնը, որպէս բարբարոսական իրաւունքի մի մնացորդ, նրանք՝ որոնք թշնամի են տիրապետողի և տիրապետուողի քաղաքակրթութեանը, որոնք չէին ցանկանալ եւրոպական արիւնիզակ կապիտալիզմի ճանաւորը շահագործութեան առարկան տեսնել ճարդկային նոր զանգուածներ էլ և որոնք կցանկանային, որ Թիւրքիայի բազմազան ազգութիւններն էլ իրենց սեպհական գոյութիւնը ունենային, — ճարդկութեան մի բաւականին ստուար ճասի վերածնունդը փափաքող բոլոր այդ ճարդիկը՝ անվերապահ և անկեղծ սրտով պիտի փափաքէին, որ Արեւելեան խնդիրը վերջնականապէս վճռուէր իր երկրորդ նորագոյն ձևովը, այն է՝ Թիւրքիան գոյութիւն ունենար, որպէս պետութիւն, բայց որպէս նորագոյն պետութիւն : Թիւրքիայի նորագոյն պետութիւնը դառնալով է, որ թէ՛ Արեւելեան Խնդիրը իր վերջնական բաւարար վճիռը կտանար և թէ՛ Եւրոպան ընդհանուր բոցավառումի ճղճաւանջից կազատուէր :

Բայց դեռ իդձերը, փափաքները նշանակութիւն, ո՞չինչ նշանակութիւն չունին : Քաղաքական աշխարհի մէջ շատ իդձեր, շատ փափաքներ են եղել, որոնք ինչքան էլ որ իրաւացի և ցանկալի, բայց նրանք իրականութիւն չեն դարձել և մնացել են լսի անցեալի յիշատակներ :

Որպէսզի իրերը ընթանան նոր և ցանկալի եղանակով, ամենամեծ և վճռական դեր ունի խաղալիք օսմանեան պետութեան մէջ եղող թուրք, տարրը, վերջին և գերակշիւ խօսքը նրանն է. նրան կմնայ նոր Թիւրքիա ստեղծելու առաջին խօսքը և առաջին գործը :

Բազմազան ազգութիւնները, ճանաւորապէս հայ ժողովրդի, ցանկութիւնները և պահանջները ո՞չ միայն ամենափոքր չափով անգամ հակառակ չեն նոր Թիւրքիա ստեղծուելուն, այլ՝ ընդհակառակը, ամենամեծ ոյժն են բերում՝ նորը յառաջացնելու ընդհանրական գործի մէջ :

Այս ընդհանուր խորհրդածութիւնից յետոյ՝ անցնենք ճանաւորներին :

ԹԻՒՐԿԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԵՐ

Ոչ ոքի համար գաղանիք չէ, որ մի քանի պետութիւններ, իրենց շահի տեսակէտով, չեն ցանկանում որ Թիւրքիան սահմանադրական երկիր դառնայ, որովհետեւ սահմանադրութեան մէջ նրանք տեսնում են մի ընձիւղ, որ ժամանակին կարող է մեծանալ, բարգաւաճիլ և որոշ պտուղներ տալ : Մի գործը, ամբարնուած, ներքին խռովութիւններից զերծ Թիւրքիա ցանկալի չէր, ճանաւորապէս, բունպետական և նուաճողական բնազդներով տոգորուած Ռուսիայի համար : Քանի կայ բունպետական Ռուսաստան, նա Թիւրքիայի անկումը, նրա յօշոտումը, թուլութիւնը, ներքին երկպառակութիւնների թափոք դառնալը իրեն արտաքին քաղաքականութեան հաւատածքը պիտի համարի : Այս կողմից պատմութիւնը մեզ կտակածի նշոյլ անգամ չի թողել : Բայց թողնենք անցեալը :

Որ բունպետական Ռուսիան այժմ, այս բապէս, աստմներ է կրճտայնում Թիւրքիայի դէմ, տանք մի փոքրիկ միջադէպի պատմութիւնը : Սահմանադրութիւնը « հազիւ հռչակուած » որպէսզի թրքական բէակցիային ոյժ տուած և շուտափոյթ կերպով ա՛յն առաջ բերած լինէր, Մոսկովեան պիւնակազմները իրենց տրամադրութեան տակն էին առել

5-6000 թրքեր, որոնց յարձակել պիտի ապին հայաստանի հարաւարեւելեան (գլխաւորապէս Վասպուրական) ճասի մէջ բնակւող հայերի վրայ . և դրանով՝ որպէսզի մի կողմից հայաստանը առանց հայի ունենալու իր քաղաքականութեանը մօտենար, միւս կողմից՝ « հայկական կառորածներով » ընդհանուր բէակցիայի առաջին նշանաբանը ստեղծած լինէր և այդպիսով իր ճարդակութեան դերը իտպար : Բարբարոսաբար՝ Վովկասի Հնչակեան բնկերները ժամանակին այդ սաղապէտական խաղի պատրաստութեան ծրագիրը երևան բերին և այդ օրերը Կ. Պոլսում եղող Հնչակեան լիազօրները կարող եղան ամէն ինչ ի դերն հանել, շնորհիւ իրենց Թուրք և Բուրգ ընկերբարեկամների : Սա մի փոքրիկ օրինակ է, բայց ցոյց է աւելիս, թէ այդ բունպետութիւնը ինչ վաքրագ բնազդներով է առաջնորդուած դէպի նորագոյն Թիւրքիան :

Մի ուրիշ օրինակ :

Կ. Պոլսա, նաև նստած Իւսկիւտար էլիք գնում : Մի քանի ռուսախոս Թուրքեր շրջապատած էին մէկին՝ պաշտօնական ամէն յարգանք տալով : Խօսակցութեան առարկան էր Թիւրքիայի ներկայ կացութիւնը : « Զեր, Թուրքերիդ, շահը կպահանջի որ այս երկրի մէջ Բաւարականապետութիւնը թագաւորի, միայն այդ բէմին է, որ կարող է ձեզ՝ թուրքերիդ գերակշիւ դեր տալ և տիրապետողի դերի մէջ պահել : Սահմանադրութիւնը ձեր առնը պիտի քանդի, որովհետեւ նրա միջոցով տիրապետութեան առանցքը կարող է փոխուիլ, և այդ նրա համար, որ քրիստոնէայ ազգութիւնները աւելի զարգացած են, քան թէ դուք : Եւ դրա հետ միասին՝ դուք ձեր երկրի մէջ ունիք մի այնպիսի անհանգիստ, ապակիւնող տարր, որպիսին է հայը : որ քանդելը, հարթ-հաւատարեցնելը իրեն վրան է առել թէ՛ ձեր և թէ՛ մեր երկրի մէջ. դուք նրանց յառաջադիմութեան ո՞չ մի պայման չպիտի տաք, իսկ այդ կարելի է միայն Բացարձակապետական բէմինով և ո՞չ թէ սահմանադրական . . . » — Մենք յետոյ լմացանք, որ այդ « մէկ » ռուսաց դեսպանատան « ազգեյկիներէց » ն էր : Ինչ և իցէ : Համեմատութեան դրէք այդ յեղուն 1833-ի և մայիս 11-ի ծրագրի սովիւ արտոյալուած Լօբանովի և Նմանների քաղաքականութեան հետ, կտեսնէք որ ամէն ինչ նոյննապիւն է և մէկը միւսի անընդհատ շարունակութիւնը : Իսկ թէ Պոլսոյ մէջ առևտական ո՞րքան լրտեսներ և պրօվօկատօրներ կան, որոնք ամէն ջանք թափում են բէակցիայի օր առաջ գլուխ բարձրացնելուն և տիրապետող հանդիսանալուն, — դա գաղանիք չէ ոչ ոքի համար : Յոյն նացիօնալիստները այդ ճասին շատ բան կարող են աւել . . .

Բունպետական Ռուսիան, ուրեմն, ո՞չ միայն չպիտի ցանկանայ, այլ մինչև վերջ թշնամի պիտի մնայ վերածնուել և ամբարնուելու ուղղով նոր Թիւրքիային : Ռուսական նացիօնալիստ-բուրժուազական և պաշտօնական լրագրերի կեղծ ու պատիւ բարեացակամ յայտարարութիւններին ո՞չ մի արժէք չպիտի տալ, — այդտեղ անկեղծութեան շիւղ անդամ չկայ :

Օսմանեան պետութեան վերանորոգութիւնը ուղղութիւնը, ուրեմն, ամէն գգուշութիւն ձեռք պիտի առնեն, որպէսզի ռուսական թակարդները մէջը չձգեն երկրի բախտը :

Բայց չթաղցնենք իրողութիւնը, այն՝ որ Թիւրքիայի մէջ առաջմ տախտակաճամբի տակ գործող բէակցիօներները իրենց յաղթանակի յաջողութեանը համար մեծ յոյս ունին դրած ռուսական այդ ջանքերի վրան . նրանք այդ դէպքում ռուսական դաշնակիցներ են հանդիսանում :

Թիւրքիայի համար՝ բունպետական Ռուսիան, ուրեմն, մի ընթացք առնու է : Բէակցիօներները ցանկանալով կցանկային որ այդ ամպը օր առաջ պայթէր :

Եթէ Ռուս Բունպետութեան ներքին կացութիւնը և էլեմտական դրութիւնը այժմ իրեն թոյլ չի տալիս աւելի ցանկալի և վճռական քայլեր անելու, — ասել չէ թէ նա

Թիւրքիայի բարեկամն է և իր դարևոր ձգտումներից ձեռք է վերցրել :

Աչքներս դարձնենք Բալքանները . — այդ կողմից էլ արտաքին դժուարութիւնները դուրս են բարձրացրել : Բայց անցրեցին ի ծառայ տեղեկութիւն ունեցողների համար նոր ո՛չինչ չկայ : Իրականօրէն Բուլղարիան արդէն Թիւրքիայի ձառը չէր կազմում, ո՛չ էլ Կրեաէն, այդ ձառն առանձին իրարանցումի ընկնելու հարկ չկայ : Թէև բռնապետական Թիւրքիայի կողմնակիցները այդ իրողութիւնը չախտի դադարեն շահագործելուց՝ յօդուս նախկին ըէժիմի և նրա պաշտպանների կորովամտութեանը :

Բօսնիայի և Հերցեգովինայի հազիւ դեռ ապստամբութիւնը ծագած էրբ առաջին անգամ Ռուսիան և Աւստրիան պաշտօնական կերպով ձաբերի փոխանակութիւն ունեցան (1877, յունուար-ապրիլ), ուսական դիւանագիտութիւնը ընդունեց, որ Բալքանների խնդիրը ինչ տեսակ էլ որ վճռուելու լինէր, յամենայն դէպս Բօսնիան և Հերցեգովինան Աւստրիային պիտի անցնէին : Այն՝ ինչ որ երեսուն և մէկ տարի առաջ ունա դիւանագիտութիւնը fait accompli-ի կարգն էր անցնել տուել, ըստ երևոյթին զարձանալի պիտի թուէր, որ նա այժմս չի ուզում որ Աւստրիան տէրը լինէր այն երկրներին, որոնց համար ինքը բացարձակ հաճութիւն էր տուել շատ կանուխէն : — Սերբիան, Մօնթենէգրօն սուպարէզ են ուզում մտնել, բայց դա առանց բռնապետական Ռուսիայի թերադրութեանը և համաձայնութեանը չի կարող լինել, — պատճառն փաստերը յետագային այդ կէտերը աւելի լաւ կ'արդարանեն : Այդ խնդիրների աստուած Բօսնիան և Հերցեգովինան Աւստրիային անցնելը չէ, բռնապետական Ռուսիան դա միջոցներից մէկն է համարում կուծն ու կուշն "ասհմանադրական Թիւրքիայի" գլխին կտորել տարու և պէտք եղած պատասաները իրեն համար էլ փրցնելու, — այլտեղ խօսում է փոխարինութեան քաղաքականութիւնը :

Թուրք թերթերից մէկը միամտութիւն էր ունեցել յայտարարելու, որ Ռուսիան և Թիւրքիան դաշնակցէին ընդդէմ Աւստրիայի . — սա մանկական մի իզձ է, որի արտայայտիչը դեռ աշխարհից տեղեկութիւն չունի : — Աւելի քան մէկ դար է, որ Աւստրիան և Ռուսիան իրարու հետ չեն պատերազմել եղել է իտպէներ, երբ երկու կողմերը ամենայն կատարութեամբ պատրաստուել են իրարու վրայ շարձակուելու, բայց անմիջապէս համաձայնել, իրենց փոխադարձ գործերը կարգապրել, հասկացողութեան են եկել՝ ի հաշիւ Թիւրքիայի : Նրանք իրարու դէմ ատամ են կրճտացրել, դա ուղիղ է, բայց ատամների այդ կրճտումը խոյն դադար է տուել, երբ ընդհանուր կարգադրութեան հարցը սեղանի վրան է եկել և երկու կողմերի դիպլոմատների առաջը դրուել : Քաղաքական դաշնակցութիւնները անցողակի բնակութիւն կրող խնդիրներից չեն յառաջանում, այլ դաշնակցիլ ուզող երկրների մնայուն իրողութիւնների պահանջից : Խաղաղական ովկիանոսից յետ մղուող բռնապետական Ռուսիան իր դաշնակիցը չախտի գոնէր Թիւրքիայի մէջ : . բացի դրանից Ռուսիան կուրի Աւստրիայի՞ դէմ, և ի՞նչ շահի, — Գօլիցիան, բայց նա մինչև կոկորդը յաղեցած է ուսական Լիհտտանից, ուր մնաց որ անմարտելի մէկ նոր պտտաւ էլ աւելայցներ :

Գարգանեկի դուների բացուելը անմիջապէս խնդրի առարկայ անող Ռուսիան շատ մեծ բարեկամ չէր կարող նկատուել նոր Թիւրքիային, քանի դիտենք թէ քաղաքակրթութիւնը տարածելու տրամադրութիւնից չէր, որ այդ քայլը արաւ, ուրիշ է թէ ցանկացած պատասխն համնել չկարողացաւ :

Աւստրիական վերջին "յառաջխաղացումը" շատերին ասել տուեց, որ այսօրուայ Ռուսիան նախաձեռնութիւն ստանձնէր և Բալքանեան դաշնակցութիւնը առաջ բերէր՝

բաղկացած Թիւրքիայից, Բուլղարիայից, Սերբիայից և Մօնթենէգրօյից :

Բալքանեան Դաշնակցութիւնը իրերի ընթացքի մէջն է, նա մի օր կգայ, բայց միամտութիւն կլինէր ենթադրելու թէ պատճառան մի այդպիսի իրողութիւն առաջ կարող է գալ լով ցեղայնութեան միտումներից զրոգում : Ռուսիան այժմս ո՛չ թէ այդպիսի մի բաղկացութեան չի ձգալի, այլ նա հակառակորդ կմնայ :

Եզրակացութիւն. բռնապետական Ռուսիան նորագոյն Թիւրքիայի բարեկամը չէ, արտաքին այն բոլոր դժուարութիւնները, որ մի բուպէ կուտակուեցան "Սահմանադրական Թիւրքիոյ" հորիզոնի վրայ, այդ բոլորի մէջ կար, անկասկած, Ռուսիայի ձառը և նրա միակ ցանկութիւնն էր, և է, թոյլ չտալ որ "Սահմանադրութիւնը" արձաններ առնի և նորագոյն Թիւրքիա տեղդուի : Ուրիշ է թէ նա ճանապարհի կէտին մնաց, շնորհիւ Անգլիայի և Փրանսիայի, ու անկարող եղաւ Եւրոպան "սրոյ և հրոյ ճարակ" դարձնել, ինչպէս յայտնեց Փրանսիական նախարար Պիքարը :

Նոր Թիւրքիա ստեղծել ուզող սյժերը աչքները շարունակ դէպի բռնապետական Ռուսիան դարձրած պիտի ունենան, այն համոզումով, որ այնտեղից միայն վտանգ կարող է գալ : Նրա բարեկամական արտայայտութիւններին ո՛չ մի արժէք չախտի տալ, որովհետև դրանք բոլորը միջոցներ են իր քաղաքական հեռուոր նպատակներին համնելու համար :

Ռուսիայից յետոյ վերջին աստիճանի զգոյշ պիտի լինել Գերմանիայից՝ "կազերական" Գերմանիայից : Եթէ գերմանական գիտութիւնը ընդհանուր հիացմունքի պատճառ է տուել, "կազերական" Գերմանիան, ընդհակառակը, նուրկանքի հասցնող ատելութեան առարկայ է դարձել : Եւ արդարև, թուրք ո՛չ մի շրջանի մէջ մենք չհանդիպեցանք շատ ու քիչ խելքը գլխին եղող մի անհատի, որ ատելով չատէր "կապիտալիստական" Գերմանիան : Թուրք էսնաֆը, գիւղացին, ինտելլիգէնտը, զինուորականը . . . "Ալըմանիայ" ին իրենց՝ այսինքն օսմանեան պետութեան և նրա մէջ պարունակուող ժողովրդների կործանող և համաշնակուլ թշնամին են համարում : Թիւրքիայի բաղկացուցիչ տարրերի՝ հակալրանքը դէպի այդ պետութիւնը և նրա "հպատակները" բացարձակ է : Մի ներքին բնազդ ամբողջ ազգաբնակչութեան հակառակութեան մէջ է դրել "Ալըմանիայ" ի հետ : Գերմանիան ուղղակի ատուած է : Եւ այդ բոլորը ունի իր խորը պատճառները, որի մէջ այստեղ մտնելը մեր նպատակից հեռու է :

Բայց սրտի մեծ յուզումով չենք կարող չլիշել այն "դաւադրութիւնը" որ տեղի է ունեցել գերմանական կապիտալիստների և սուլթանական Հին ուէժիմը վարող սյժերի միջև : Պետական մի կարգ թևարկութիւններով որաշուել է մամուտը կերպով դիւրութիւններ տալ "գերմանական ապրանքների" ծաւալուելուն : Վարկով՝ ամանագին, դիւրամատչելի ապրանքներ են առաջարկուել հայ վաճառականներին, սրանց այն յայտը տալով՝ թէ ուզած ժամանակին կարող են փոխարժէքը տալ, —բայց դեռ նայն իսկ սովորական պայմանածածը չլրացած, սուլթանական կառավարութեան բացայայտ մեղսակցութեամբ, հայերից պահանջուել են անմիջապէս հատուցանել իրենց պարտքերը, թէև վարկով տրուած ապրանքները դեռ դիզուած մնացած են եղել : Հետևանքը այն է եղել, որ շատ հոյ վաճառականներ այս տեսակ արուեստական կերպով անանկացրել են և շատերին էլ շուկայի վրայ վարկաբեկ արել : Կապիտալիստական և Սուլթանական այդ խաղերի թագուն նալատակն է եղել՝ ասպարէզից մի անգամից դուրս քշել հոյ վաճառականութիւնը, այնպէս, ինչպէս որ երբեմն Համիդը իր պալատից արձակեց բոլոր հոյ սպասուորներին :

Լսել էինք գերմանական Կայսեր "կաշառուիլը" Հայոց դէժ 1), բայց չէինք կարող ենթադրել անգամ, որ մի պետութեան արտաքին դիւանագիտութիւն ընդունակ կարող էր լինել այդ ատիւժանի վար իջնել մի "հարածուած" ազգի վաճառական դասակարգին սպառնալու քայքայելու համար:

Այսպէս թէ այնպէս թուրք բոլոր ժողովրդից Գերմանիան ասուած է. ի հարկէ այդպէս չէն այն պալատականները, որոնք երբեմն այդ "աղբիւրից" հազարներ էին ստանում, իրենց տեղերը հանգիստ նստած, բայց Թիւրքիայի այս ու այն ծասերը և պետական եկամուտները վաճառքի հանելով:

Նորագոյն Թիւրքիա ստեղծել ուզող ոչմերը անպատճառ իրենց մէկ աչքն էլ պիտի դարձնեն դէպի Գերմանիա, դէպի այդ գերազանցօրէն շահամուլ և գծուծ երկիրը — մեր խօսքը միշտ պաշտօնական Գերմանիայի և Գերմանացիների մասին է — որ ամէն լարերի յետևից ընկնում է, որպէսզի Թիւրքիայից ծծի, ի՛նչ և ի՛նչքան որ կարող է: Գերմանիայի ընդհանուր միտումն է Թիւրքիան որքան կարելի է անսեսապէս տիրապետել, տեղական ժողովրդի շահերին ամենափոքր անգամ ուշադրութիւն չդարձնելով: Գերմանական բոլոր ձեռնարկներից ժողովուրդը, առանց ազգայնական խարութեան, բոլորն էլ դժգոհ են:

Քանի որ Գերմանիան այսօր ուզում է Թիւրքիայի նկատմամբ իրականացնել համագերմանականների ընդհանուր ճրգատումները, որ երևան է եկել Փրանկֆուրդի (1848) Պարլամենտից յետոյ, բնականաբար այդպիսի միտումներ տաժող երկրի դիւանագիտութիւնը իսկական և անկեղծ բարեկամ չի կարող լինել նորագոյն Թիւրքիային, քանի որ նրան աւելի ձեռնուտ էր հին Թիւրքիա՝ ծծելու և բեկորներ ձեռք բերելու համար:

Այլևս պատմական ո՛չ մի արժէք չունի Բիսմարկի այն խօսքը, թէ "Ամբողջ Արևելեան Խնդիրը Պոմերանցի իմ մէկ զինուորի ոսկրին չարժեանայ": Թէև ո՛չ Պոմերանցի, ո՛չ Պրուսիացի և ո՛չ էլ Գերմանացի մի զինուորի կամ ամբողջ բանակների ոսկորը մինչև ցարդ ո՛չ մի արժէք չի ունեցել մանր և հարստահարուած ազգութիւնների ազատագրութեան տեսակէտից, ինչպիսի արժէք որ ունեցել է Փրանսիացի և Անգլիացի զինուորների ոսկորը, — այնուամենայնիւ հիմա խնդիրները այնպիսի կերպարանք և ուղղութիւն են առել, որ Արևելեան Խնդրի համար Գերմանիան պատրաստ է տալու իր շատ Պոմերանցի զինուորների ոսկորները:

Համագերմանականներին մի կողմ թողնելով, ոչ ոքի համար

ճաճուկ չէ և ո՛չ էլ փաստի պակաս հաստատելու համար այն, որ Աստրիայի Բալքանեան քաղաքականութիւնը վարողը կայսերական Գերմանիան է, քաղաքական ամէն գործառնութիւնները նրա ղեկավարութեամբ են կատարուած: Եթէ Աստրիայի արտաքին քաղաքականութիւնը Թիւրքիայի նկատմամբ տարածականութեան (extention) բնաւորութիւն ունի և այդ քաղաքականութեան մղիչ ոյժը և պաշտպանը Գերմանիան է, — ի հարկին Պոմերանցի զինուորի ոսկորով — ասել է թէ նա նորագոյն Թիւրքիայի այնպիսի բարեկամը չի կարող լինել, որ խիսն են Անգլիան և Փրանսիան:

Ռուսիան, Աստրիան և Գերմանիան, որոնք դրականօրէն վարում են Բալքանեան փոքր պետութիւնների արտաքին ասուած քաղաքականութիւնը — իրական բարեկամներ չեն նոր Թիւրքիային, և հէնց այդ տեսակէտով նրանց բոլորին մի գծի վրայ պիտի դնել և ըստ այնմ վարուիլ:

Թրքական ղեկացիները եթէ մի օր հնարաւորութիւն ունենան պետական հարուած յառաջ բերելու, անշուշտ նրանք աչքի առաջ կունենան այդ երեք պետութիւնների արտաքին քաղաքականութիւնը և նրանից էլ կօգտուին, քանի որ արտաքին բարդութիւնները միշտ կարող են իրենց հակահարուածը ունենալ ներքին խնդիրների վրայ: Ուստի նորագոյն Թիւրքիայի ուժերը շարունակ դուշաւոր դիրք պիտի բռնեն դէպի արտաքին խնդիրները: Այդ տեսակէտով բարդութիւնների տեղի կարող է ապւ և "Պարսկական Խնդիրը": Մի ժամանակ Ատրպատականը գրաւելու խօսք կար և բաւականին էլ ժողովրդականութիւն ստացաւ զինուորական այդ ճարգանք կատարելը: Երիտասարդ թուրքերից շատերը իրենց սպասածից աւելի ճօտիկ էին տեսնում համիլյաճական անուրջի իրականացումը: Բարեբախտաբար՝ սուլթանամիա այդ խարդաւանքը շատ առաջ գնալ չկարողացաւ և լրջութիւնը առաջմ յաղթող հանդիսացաւ: Դա էլ մի ծուծ կէտ է, որ կախուած է "Նորագոյն Թիւրքիայի" ի վրան:

Յամենայն դէպս՝ Թիւրքիայի արտաքին քաղաքականութիւնը այս օրերուս պիտի լինի խաղաղութիւն ամէն գնով: Հակառակ դէպքում ամէն ինչ տակն ու վրայ կլինի և 1876-ի անցքերը կվերակրկնուին ու դրանով Թիւրքիան մի նոր անդունդի առաջ կկանգնի:

ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Թրքական սահմանը ոտք կոխելուն պէս՝ երկրի անկազմ, անկերպարան վիճակը մէկէն աչքի է ընկնում: Ո՛չ միայն

1) Հայկական կոտորածների ժամանակ Սուլթան Համիդը իր սիրելիներից և ճաշակներից մի քանիսին Եւրոպա էր ուղարկել ճամուլը կաշառելու և թոյլ չտալու որ կոտորածներին արձագանք տան: Այդպէս էլ եղաւ: Փրանսիական լրագրների մէժ ճարք թափուած սոկիների շնորհիւ՝ "գաւազութեան լուսնիւնը" կաղմակերպեց, ինչպէս որ բնորոշեց պր. Անուպալը. Հազիւ մի քանի անկախ թերթեր էին մնացել, որոնք շատ ու քիչ գեղարուած էին Հայկական կոտորածներով և տալիս էին տեղի ունեցած վայրագութիւնների նկարագրութիւնը: Այդպիսի թերթերից մէկն էր ահա, Intransigeant-ը, որ այդ ժամանակ լոյս էր տեսնում պր. Ռօշֆօրի խմբագրութեամբ: Սուլթանի ճաշակներից մէկը, որի անունը չենք յիշում, Մեքքոմ խանի միջնորդութեամբ, ներկայանում է Ռօշֆօրին խնդրելու, որ իր "արշաւանքը" դադարեցնի:

Սուլթանի պատուիրակին պարզապէս մի "խմբի" տեղ դնելով՝ Ռօշֆօրը ըստ երևույթին յօժարութիւն է ցոյց տալիս լուրեր, եթէ միայն իրեն էլ արժանաւոր վարձատրութիւն տան:

— Ի՛նչքան կուզէիք, հարցնում է պատուիրակը:

— Բայց իմ արժանիքս գնահատելու համար՝ ես նախ կուզէի գիտնալ թէ ուրիշներին ի՛նչքան էք տուել: Մինչև

որ ուրիշները չափը չիմանան, ես իմս չեմ կարող ասել, պատասխանում է Ռօշֆօրը:

Ու միամիտ պատուիրակը սկսում է մի առ մի թուել եւրոպական, ժամանաւորապէս Փրանսիական այն լրագրերի և անձերի անունները, որոնք Սուլթանից կաշառք են վերցրել, հայկական կոտորածների առթիւ: Ի թիւս այլոյ՝ ասում է որ Գերմանական կաշառք արուած է եղել 6 միլիօն ֆրանկ:

Ռօշֆօրը իրեն պէտք եղածը լսելուց յետոյ, ասում է որ վաղը գոյ և ինքը "իր գինը" կասի: Հետևեալ օրը այդ իրողութիւնը անվախ նացիօնալիստ-չեղավոխականը հրատարակ դրեց իր թերթի մէջ:

Այս իրողութիւնը մեզ պատմել է ինքը անձամբ պր. Ռօշֆօրը:

Մեր այն հարցին՝ թէ Մեքքոմ խանը իր կողմից արդեօք խնդրեց որ ինքը լուի և հոյսը մասին չգրի, — Ռօշֆօրը պատասխանեց, որ Մեքքոմ խանը խնդրեց միայն ընդունիլ և մի կերպ ճանապարհ գնել, որովհետև Պոսից իրեն խնդրուած է այդ մասին:

Դժբախտաբար Intransigeant-ի այդ թուերը ձեռքի տակ չունինք, որպէսզի ուղարկուած պատուիրակի փաշայի անունը ուղղակի տայինք՝ միւս ճանրամասնութիւնների հետ միասին:

ազգին տարածութեամբ ամայի, աննարգրեալ վայրեր աչքիդ առաջն են փռուած, այլ ճարգ իր գայրոյթը չի կարողանում զսպել, երբ տեսնում է թշուառութեան բացարձակ թագաորութիւնը ճի աշխարհի երկրում, ուր բնական հարստութիւնը իր բարձրագոյն աստիճանի վրան է գտնուած: Այդ հերթը չէ, — ամէն քայլափոխիդ այն համոզումն էս կայացնում, որ երկրի կառավարութիւնը, պաշտօնէութիւնը բառի բուն նշանակութեամբ կազմակերպուած է միմիայն ժողովրդին կողմանցու և կեղեքելու համար:

Միտն կառավարութիւնը չէ, որ կարծես թէ յատուկէն այդ միտնան է ստանձնած եղել, այլ նոյնը ո՛չ նուազ չափով ու եռանդով գործել են նրանք, որոնք, սակայն, երուպական քաղաքակրթութեան անուանու են, որպէս թէ, այնտեղ մուտք գտել: Կապիտալիստական երուպայի ծայրագրանորէն անխիղճ շահագործուած ո՛չ մի տեղ այնքան ցայտուն կերպով ճի անգամայն աչքի չի գործում, որքան թիւրքիստան: Ժամանակին երուպական հասարակական գործիչները և քաղաքագէտները սովորութիւն ունէին ստեղծել թէ թիւրքերը երուպայի մէջ բանակած աւազակներ են. նոյնը աւելի մեծ իրաւունքով այսօր կարելի է ասել կապիտալիստ երուպայիներին, — այն թէ՛ թիւրքի մէջ անտեսական շահագործութեամբ պարսպող երուպացիները ո՛չ այլ ինչ են, եթէ ո՛չ աւազակներ, որոնք իրենց պետութեան ոյժին վրայ յենած՝ մինչև սփարը ձգում են տեղական ազգաբնակչութեակենսունակութեան ստորերը: «Բէժին» ուղղակի կազմակերպուած մի աւազակութիւն է: Երուպական քաղաքակրթութեան հաստատութեան այդ ներմուծումից ի վեր թիւրքի մէջ ծառ 82,000 ճարգ է սպանուել շահագործողների իրաւունքը պաշտպանելու համար:

«Հիւրիէթ» ի այս օրերում՝ հայ և թիւրք գիւղացիները անտեսական հողի վրայ անմիջապէս իրենց շահերի նշանութիւնը տեսնելով, ճի առանձին եղբայրակցութեամբ, ազատ համարձակ, երկաթուղիների կայարաններում սլուալով ծախում էին իրենց «թիւրքի», համոզուած լինելով, որ «Հիւրիէթ» ը չլիտի համբերէր, որ երուպական այդ շահագործուած յարատուէր և իրենց արիւն-քրտինքի արտադրածը ուղղակի յաիշտակութեան ենթարկուէր, Միախառն մշակութեամբ պարսպող գիւղական տարրը, առանց ազգի խարութեան, բաւականին բարեկեցիկ վիճակ կունենար, եթէ «բէժին» շահագործուած վերամար, սրովհետև ազգին տարածութեամբ շրջաններ և հարիւր հազարաւոր ընտանիքներ կան, որ միմիայն «թիւրքի» և արտադրութեամբ են պարսպուած, մինչդեռ իրենց աշխատանքի արդիւնքը ուղղակի խլում է ամենաշնչին գնով,

Գիւղական ճշակների, օրավարձով աշխատողների, ինչպէս և անհող ու սակաւահող գիւղացիների թիւը կարծուածից աւելի շատ է մինչդեռ ազգին տարածութեամբ հողեր սեպհականութիւն են զանազան բէկերի, աղաների, փաշաների, որոնք ո՛չ միայն իրենց սեպհականութիւնը չեն ճշակում, այլ հազիւ լսել են իրենց հողերի ճափին:

Դրա վրայ աւելացնելով կառավարական տուրքերի խտութիւնը, տեղական զօրաւորների կեղեքումը, հողագործութեան նահապետական ձևի ճշակումը և ճանապարհների բացակայութիւնը՝ անապահովութեան հետ միացած, — հոսկանայի կլինի այն աղէկարշ գրութիւնը որ ունի գիւղացին թիւրքի մէջ:

Երբեմն մեր հակառակորդները ճի առանձին հպարտութեամբ մեզ հարց էին առաջարկում թէ կա՞յ արդեօք թիւրքի մէջ մի վայր, որ շատ ու քիչ նմանութիւն բերէր Բագուին կամ Բաթումին: Նրանք, առանց միջավայրը ուսումնասիրած ինելու, այն համոզումն էին կայացրել թէ թիւրքի մէջ պր օրէտարի, գործարանական բանուորի նմոյշ անգամ չկայ:

Այդպէս ծածոնդները կարող են երթալ նիւոմիդիոյ շրջանը, և միայն այնտեղ կարող են գտնել աւելի մեծ թուով գործարանական բանուորներ, քան Բաթումի մէջ. էլ չենք խօսում միւս վայրերի մասին, ուր սրբօրէտարիաւոր կայ և գոյութիւն ունի երուպական հասկացողութեամբ:

Տնտեսական հողի վրայ, — մի կողմ թողած քաղաքականը — երուպացիների ունեցած «կապիտալիստները» ազգին մեծ առաւելութիւններ են տալիս երուպացիներին, ի վնաս տեղական արտադրողներին. անհատաւարութեան մի մեծ աղբւր են «կապիտալիստները», քանի որ երուպացին ազատ ձեռք ունի աշխտեղ, ուր տեղացին, առանց ազգի խարութեան, արդէն կաշկանդուած է:

Աչքի առաջ ունենալով թիւրքի ներքին տնտեսական կացութիւնը, այլև նրա երկնամասկան վիճակը և պարսքերի այն հսկայ շեղքը, որի տակ ինքը մտել է, բնապետութեան արան-թալանի շնորհիւ, — դա էլ մի գորաւոր փաստ է, որ նոր թիւրքիստանը անպատճառ պիտի ցանկանան որ խաղաղութիւնը տիրի, որպէսզի երկրի արտադրող ուժերը զարգանան և աճին ու այդ կերպով նպաստեն նորագոյնի ստեղծուելուն:

Արտաշայտուած խանդավառութիւնները, ժողովրդային զղիւխ տեսարանների կրկնութիւնները որքան որ լաւ նշան, բայց դեռ հիմնական չեն: Բաղկացուցիչ ժողովրդների միջև մտքի ղգացմունքի ներդաշնակութիւն դեռ չի տեսնուել գիտակցական հողի վրայ: Ուստի դա էլ մի մեծ պատճառ է՝ որ թիւրքիստան անպայման պիտի աշխատի խաղաղ և անվերջ շրջանի մէջ վարել իր կեանքը:

ԺՈՂՈՎՈՒՐԿԸ

Թիւրքի մէջ ապրող բոլոր ժողովուրդները գտնուած են անասագութեան մէջ. մտքի, զգացմունքի տարտածութիւնը ամէնրի բաժինն է. բոլորն էլ սարսում են ռի բանի, կասկածը ամէն կողմ թագաւորում է հակառակ հրապարակային գիրկընդխառնումներին. հագեբանական այս վիճակը հանրական ինդիւրներով ամէն պարսպողի գրել է մի տեսակ ջրաձգութեան մէջ: Հէնց այդ անասագութիւնը, տիրող փոխադարձ այդ կասկածն է պատճառ, որ ազգաբնակչութիւնը զինուած է ու զինուած: Թուրք տարրը ուղղակի սպառազինուած է մինչև ատամները. աղքատ գիւղացին խկ հարիւրաւոր մղոններ կարելով, իր անհրաժեշտ գոյքը վաճառքի հանելու գնով, աշխատում է գէնք և նորագոյն ձևի գէնք ունենալ: Գնորդները մրջիւնի պէս լցուած են Պոլսոյ զինավաճառների խանութները. դրանց մինչև հաշուետեղանք երթալու համար ժամեր պէտք է սպասել հերթի իրեն հասնելու համար, այնքան որ յաճախորդները շատ են: Աչքի ընկնող մի ուրիշ կէտ էլ կայ, «խլամ»ներից շատերը, վերջին ճարք աղքատութեան պատճառով, անկարող պիտի լինէին որ և է գէնք գնել, և այդ պարզ երևում է իրենց հագած գրգռակներից, բայց նրանք այնուամենայնիւ գէնք են գնում ու գնում. հարց՝ որտեղից այդ գրամները, ո՞վ, ո՞ր ձեռք է նրանց օգնում այդ գնումները կատարելու:

Գիւղական ազգաբնակչութիւնը, մեր խօսքը այստեղ մասնաւորապէս «խլամ» տարրի մասին է, մի կողմից հին գէնքերն են նորոգում ամենայն արագութեամբ և վառօդի ազգին պաշար պատրաստում, միւս կողմից՝ նոր գէնքեր ձեռք բերում՝ և այս նոր գէնքերը «կառավարական» տեսակիցն են: Բանակի նախկին հրացանները ամենատան գնով կառավարական հաստատութիւնները ծախում են գիւղացիներին, բայց ո՛չ հայ գիւղացիներին, խճռաթիւն կայ այստեղ, նոյնը և՛ վառօդի նկատմամբ, — «խլամը» քլիօնելով վառօդ գնած ժամանակին, «անհրաժեշտութիւն» ունեցող հայը, երկար դիմումներից և ծուռուծուռ ճանապարհներ

անցնելուց յետոյ, Հազիւ Հազ կարողանում է ճի բանի գրամ միայն ձեռք բերել: Չինուած են մասնաւորապէս լազերը, չերբէշները, գիւրջիները (թրքացած վրացիները) և առհասարակ բոլոր "մուսուլմանները":

Օվաճըզի միջից (Նիկոմիդիոյ, Բզմիոի շրջանում) երկու ձիւ բեռ կառավարական "ճարտիներ" անցրին օրը ցերեկին, նոյնպէս և Քէյլի կողմերը: Ուրեմն, անասուգութեան և կասկածի այս օրերում "խալամ" տարրը զինուած է կարծես թէ բնազգով զէնքերից է օգնութիւն ակնկալում, որ իրեն որոշեալ նպատակի և հանգստութեան տանի՝ փորձանքի օրերում:

Չինուած կողմից աւելի քան թոյլ է Հայ ժողովուրդը, սա եթէ "ազատութիւնից" զինուցած չէ, ճի առանձին փութկոտութիւն էլ ցոյց չի տալիս զինուելու: Այդ նկատմամբ, չսխալինք, ճի բան նա անում է, — այն է՝ կառավարական հաստատութիւնների ուշադրութիւնն է հրաւիրում իր "խալամ" համարադրացիների և համագիւղացիների զինման վրայ: Իսկ ինքը տուրեւաւիկ (մերկանտի) ոգու տակ ընկճուած, թէև ունենայ Հազարներ, բայց զէնք ձեռք բերելը, ինկնայաշարանութեան պատրաստուելը, հարկաւոր դէպքում, իր հաշիւների մէջը բնա՛ւ չի մոցնում: Հակադրութիւնը այն է՝ որ "խալամ" տարրը, կառավարական օգնութիւնը մէկ կողմ թողած, չունեցածով է զէնք գնում, պարտք է անում, իսկ հայը իր ունեցածից ճի փոքրիկ բաժին էլ չի հանում իր անձը և գոյքը պահպանելու գործիքը իր վրան կամ տանը մէջը ունենալու: Հայը սիրում է իր տան կահկարասիները ճոխացնել, սակիների կայտը աւելացնել, իր կնոջ և աղջիկների "սակիներ" ի շարանը խտացնել, զարդարանքները աւելի աչքառու և փայլուն դարձնել, քան ձեռք բերել այն միջոցը, որ ճի օր պիտի կոչուի թէ իր անձը, գոյքը և թէ իր կնոջ ու աղջիկների պատիւը պաշտպանելու: Սա ուղղակի ճի արտ, ճի հիւանդութիւն է, որով վարակուած են լինում "ուայեայ" ժողովուրդները: Երանք՝ որ դարերի ընթացքում իրենց գոյութեան առանցքը ո՛չ թէ իրենց բազկի մէջն են տեսնում, այլ արդի գիտարտութեան, արգահաստանքի մէջ: Այս ատեակետով Հայ ժողովուրդը անասահանութեան ճանաւոր կարիք ունի:

Նոր սերունդը, յեղափոխական սերունդը՝ ուզում ենք ասել, նա՛ որ՝ մուռել, մեծացել է մեր արեան օրերի մէջ, ո՛չ միայն այդ ակտից դերձ է, այլ պժգանք է գգում, և արդէն ամէն տեղ նա կուռի է բռնուել այն տարրերի դէմ, որոնք դեռ իրենց "պապեանական" սղին անեղձ են ուզում պահել: Այդ սերունդն է որ ամէն փաշտարանի սուարկայ պիտի դառնայ և նրան ամէն միջոց և ընձեռութիւն պիտի պրուի իր ձգտումներին հասնելու՝ տեղի և պարագաներին համեմատ:

Մեր 21 տարուան յեղափոխական կեանքը ի գուր չի անցիլ. — հրապարակ է գալիս վառվառն, երկաթի ջիզերով կախուած ճի նոր սերունդ, որ գիտէ, որ ճանաչում է կեանքը և նրա պահանջները: Եթէ "ուայեայ" հայրերը շատ տեղ, երբեմն, իրենց աչքները գոդեցին և դուրսները գրեցին յարձակուողի սրի տակը, ներկայ սերունդը, եթէ զէնք չունենայ, ասամներով կելուռի, բայց կըկուռի աղաճարդի պէս, մինչև վերջին շունչ իր թշնամու կրծքին պլլաւած, եթէ ո՛չ յաղթող, ապա երկուսը միասին իրար պրկուած գերեզ ան իջած, — սա կլինի վերջին պատկերը:

Այն երիտասարդութիւնը, այն յեղափոխական սերունդը, որ մենք տեսնք Պարտիզակի, Տէճուկէլի, Օվաճըզի, Արալանպէկի, Ատաբազարի, Գուրպպէկի, Գընճըլարի, Էշմէի և Միւսգիւղի մէջ, — մեկ լիակատար իրաւունք է տալիս ազատ շունչ քա՛ելու և ասելու որ "պահալը փոխուած է, ապագան ապանովուած":

Բռնապետական բէթիմը լուծիւնը համատարած դարձնելով, շատ տեղեր բնա՛ւ տեղեկութիւն: չեն ունեցած հին անցած-դարձածի ճասին: Երանք գիտցած չեն եղել ո՛չ իրենց նախածարսիների տուած գահերի թիւը, ո՛չ նրանց արարքի նպատակը և ո՛չ էլ "արիւնուշտ քաղաքականութեան" ձգտումների նպատակակէտը: Այժմ ամէն ինչ պարզուած է և այդ կենտուակ, կորովի, ջլապիմը, հասարակութեան բարօրութեան նուիրուած երիտասարդութիւնն է որ գործերի զեկը իր ձեռքն է ուզում առնել. — որ նա իր նպատակին կհասնի, դա անկասկած է:

Քանի որ խօսքը թիւրքիայում ամփոփուող ժողովուրդների ճասին է, մենք նոր բան ասած չենք լինել, եթէ նորից մասնաւոր չենք այն դարհուրելի թշուառութիւնը, որ արիւնն է այդ երկրի տարածութեան վրայ, ուր սակայն բարեկեցութիւնը, համեմատաբար, ամէնքի՛ բաժինը պիտի լինէր, որովհետև բնութիւնը ոչինչ չէ խնայել ամէն տեսակետով:

Բնական այդ հարստութեան մէջ՝ միայն ճի խեղակորոյս բռնապետութիւն կարող էր խեղճութիւնը համատարած անել ընդհանրապէս և Հայ աշխատասէր ժողովուրդին դրականապէս սպասելու, ցրուելու՝ փորձեր անել՝ ճանաւորապէս: Արալանպէկիցները, ինչպէս և Միջագիւղացիները՝ մտածել են իրենց հաշուով գիւղական ճանապարհ շինել՝ ճուտակայ գլխաւոր գծի հետ կապելու համար: Կառավարութիւնը ինքը որ պարտականութիւն ունէր այդ ճանապարհները շինելու, որովհետև այդ գիւղացիներից նա տուրք է առնում ճանապարհների համար, նա ո՛չ միայն այդ չի արել, այլ արդէն է եղել: Նոյն իսկ Հայ գիւղացիները 100-200 ոսկիով էլ կաշառք են տուել, դարձեալ թոյլ տրուած չէ եղել ճանապարհները շինել: որովհետև "հայ" են եղած և նրանց բարգաւաճումը ցանկալի չէ նկատուած համարական կամաւրիլայի կողմից: Այդ փոքրիկ օրինակը ցոյց է տալիս թէ բռնապետական ոյժերը ինչե՛ր են խորհած եղել Հայ տարրի նկատմամբ. և դեռ կան ճարդիկ, որոնք ասում են թէ Հայ յեղափոխութիւնը կանխահաս պայթեց:

ԲԷԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ՈՅԺԸ

Դեռ շատերի մէջ այն համոզումն է տիրում թէ Սուլթան համիդը բարեացակամութեան ճի շարժումով "Սահմանադրութիւնը" վերահաստատող ազգակներից եթէ ո՛չ գլխաւորը՝ գէթ մէկը հանդիսացաւ: Քա՛ թոյրովին սխալ է: Ո՛չ միայն Սուլթանը՝ այս բառի բովանդակ նշանակութեամբ ամէն ջանք թափել է "Սահմանադրութեան վերահաստատութեան" արգելք լինելու, այլ նոյն իսկ այսօր, և միշտ, որպէս կատաղի հակառակորդ սահմանադրական գործերին, ամենաթիւթե յաջողութեան նշաններից պիտի օգտուի իր բացարձակապետական լիակատար իրաւունքները վերստին անխափան վարելու: Գալիք պատմութիւնը և փաստերը ցոյց կտան թէ նա ի՛նչ սաղայէտական միջոցներ էր խորհել III-րդ դարբանակը ցրուելու: — "Ամէն հնարաւորութիւն գործ դիր ցրուել այդ սրիկաներին", այս էր եղած Սուլթանի վերջին հեռագիրը Շէմսի փաշային. և մեկ այդ եղելութիւնը պատմող սղան թուած էր: այն բոլոր միջոցները որ, բոտ հրահանգին, ձեռք պիտի առնուէին "սրիկաների" իրենց աները ուղարկելու: Կրկնում ենք, եթէ այսօր ի՛սկ Սուլթանը ամենափոքր հնարաւորութիւն ունենայ, նա ո՛չ միայն "Սահմանադրութիւնը" ոտքի տակ կհանի, այլ ամբողջ երկրը արեան ճով կկարճնի՝ առանց ամենափոքր խղճի խայթի, որպէս պարտականութիւն և իրատանը, որ Լապի յայիս Ա. էր առաջ եղած դրութիւնը նպէս վերադարձնայ: Սուլթանը քանի որ ողջ է՝ այդ ուղղութեամբ գործերուց նա երբէք չպիտի դադարի: Եթէ ընդհանուր ազգերի և սահմանադրական երկրների սահմանութիւնը որոշուի՝ սա՛ են ստիկ, որ բռնապետների խօսքերին ո՛չ մի պայմանով չեն կարող

Մենք մեր ուշադրութիւնը , նոյնպէս , պիտի դարձնենք հանրական կրթութեան վրայ և աչքի առաջ ունենալով , որ եւրոպական պետութիւնները իրենց բարգաւաճմանը բարձր աստիճանին հասած են միայն կրթութեամբ , մենք ցանկանում ենք որ մեր բոլոր հպատակները , ինչ պատկարզի էլ որ պատկանին , ամէնքն էլ կարողանան օգտուիլ զիտութեան բարիքներից՝ իւրաքանչիւրը իր ընդունակութեան համեմատ . (և որպէսզի երկրի յառաջարկութեանը մեր բոլոր հպարտներին , առանց խորտակման , երջանկութեան քերտ և որպէսզի նրանց այս բազմաթիւները ներշնչան , մե՛ք հրամայում է՝ որպէսզի եր հասարակել , որ աստիճան հասարակելու առաջ և կրթութեան գործի) : Մենք ցանկանում ենք , որ առանց յապաղելու ճառագէտք այն բոլոր միջոցների մասին , որոնցով կարելի կլինէր այդ կարեւոր նպատակին հասնիլ : Բացի դրանից՝ պէտք է անմիջապէս սկսել զաւանդների վարչական , ելեմտական և դատատանական բարեփոխութեանը , որպէսզի զաւանդների համար ստեղծուի իրական բնական մի դրութիւն և յարմար այն հիմունքներին , որոնք կընդունուին կեդրոնական կազմակերպութեան համար : (Ահրաժեշտ է , նոյնպէս , որ գոտանորդի , հարկերի և անաւանակի գործերի օրենքները արդարութեան համեմատ լինին , և մեր ջանքերը կողմնակից թողնէին այն օրենքները է շարք գործ շարքին : Գերեւորի գումարը և վաճառումը հակառակ լինելով Շերիկ օրենքին և մարդկութեան . ու առաջադիմութեան ուղեւորներին , մե՛ք գերեւորներն և ներքիններն մեր Պալատներից աշար է՛ք արձակում ու յարարարում է՛ք որ այսօրուանից սկսեալ գերեւորներին ընդ թացը յապարտաւորութեամբ և մեր կայսրութեան մեջ : Մեծ ժամանակ պետի որոշելու է բոլոր գերեւորներն աստիճանաբար աշար արձակուելու և մե՛ք մասնաւոր միջոցներ յետ կատարելու՝ որպէսզի արդարութեան վերահասարակութեանը ընդ մշտ արգելելու) :

Մեկ տարիից ի վեր Բոսնիան և Հերցեգովինան՝ չար թելադրանքների հետևանքով՝ սպառնալու համար մէջ են և Սերբիայի սպառնալու համար էլ զրա վրայ աւելանալով՝ հոսանքներ է ապրիտ միևնոյն երկրի զաւանդների արևմտ : Իրերի այդ դրութեան շարունակութիւնը մեզ համար խորին մի տիրութեան պատճառ է և մեր անբողջ ցանկութիւնն է այդ բոլորին վերջ տալ՝ ամենախիստ և կտրուկ միջոցների զիմեղով :

Մեր դաշնակցութիւնները օտար պետութիւնների հետ վերանորոգուած և մեր կողմից ճանչցուած լինելով՝ մենք կաշխատենք Պետութիւնների հետ ունեցած մեր բարեկամական կապերը սեղմել :

Թող մեր մէջ Աստուածը յաջողութիւն պարգևի մեր ցանկութիւններին :

Շաբաթ , (Սեպտեմբեր , 1876)

Սուլթանը սուրը կապած ժամանակին իրեն շնորհաւորող աւագանիին ասել էր . “ Ես մե՛ք մեկ բազմանք ունի , այն է՝ մեր երկրի յառաջարկութեանը և ի՛ք բոլոր հպարտների խառնուրդն : Ի՛ք գործերն պետք է հասարակել բարեկարգութեանը և էլու ի՛ք խոտորածներն ” :

Թագապետութեան արարողութիւնը լրանալուց յետոյ , Մեծ-Եպարքոսը՝ ձերտնի Ռիշաի փաշան՝ իր պաշտօնակիցներին դառնալով՝ ցածր ձայնով ասաց . “ Մե՛ք շար աճապարտեցին՝ Աստուած Սեփի յետա՛ք Կալէլու , երանք ի՛ք շրջանայեցողութեանը մեր արարել զրան ” :

Բարեմտութիւնները հազիւ վերջացած , նորահաստատ Սուլթանը արքունիքի Մեծ ձարաշախտ նշանակեց Տաճատ Մահմուտ Ալէլալետախինին , Սալիա (ինզիլիզ) փաշային կար-

գեց իր առաջին թիկնապահը, իսկ Քիւզիկ Սալիտին՝ իր առաջին քարտուղարը, որանք բոլորն էլ «ազատամիտ» խմբի հակամարտորդներն էին Սա եղաւ երկրորդ յուսակարութիւնը:

* * *

Հետեւելու համար Սուլթան Համիդի մտածմունքներն ուղղութեանը ոչ նուազ հետաքրքրական է կարգալ նրա դիւստրաթիւնը «1876-ի Սահմանադրութեան» սկզբնական խմբագրութեան մասին:

Նոյեմբեր 23-ին Սուլթան Համիդը գրում է «Հայրենասէր» Միջհաս փաշային:

Իմ պայծառափայլ վեզիրս Միջհաս փաշա,

«Մենք տեղեկացանք այն սահմանադրութեան մասին, որ դուք Մեզ յանձնեցիք կիսապաշտօնապէս: Մենք նրա մէջ գտանք այնպիսի կէտեր, որանք անյարմար են մեր ազգի բարքին ու յատկութիւններին: Մեր փափաքն է երկրի ապագան ապահովել մի արդար վարչութեամբ և գնահատում ենք այս նպատակով արած ձեր բոլոր ջանքերը: Մի բան, սակայն, որին մենք մեծ կարեւորութիւն ենք տալիս, այդ այն է՝ արքէլ վեհապետի կրօնաբանութիւնը: Մենք փափաքում ենք, որքան, որ Սահմանադրութիւնը վիճարանութեան առարկայ գտնուի նախարարական ժողովին մէջ և մեր մասնանկիւղած կէտերի մասին բարեփոխութիւններ լինին:

«Յամենայն դէպ» Մենք յոյս ունինք որ ձեր Հայրենասիրութիւնը ձեզ պիտի ներշնչէ ջանքեր այս նպատակին հասնելու համար և Մենք ցանկանում ենք, որ Մեր այս իրաւէն գաղտնի մտայ Մեր Մեծ-Եղբորսի և ձեր մէջ»:
9 Ձիլհիճճէ, 1293 Հէճիրի (23 նոյեմբեր, 1876)

Նորին Վեհափառութեան առաջին քարտուղարին՝ Միջհաս փաշան տալիս է հետեւեալ պատասխանը:

«Վեհմափայլ Տէր,

«Արդէն անկարող լինելով նորին Վեհափառութեան իմ շնորհակալիքս յայտնելու իր բոլոր բարութիւնների և բազմաթիւ բարեաշխարհութիւնների համար, որոնցով ինձ ոգողում է անէն օր և անէն վայրկեան, չգիտեմ ի՞նչպէս յայտնեմ իմ երախտագիտութիւնս այն նոր և՛ մեծ պատուի համար, որին ես ա՛յնքան քիչ եմ արժանի, ընդունելով նորին Վեհափառութեան ինքնազիր նաճակը, որով ինձ հրաւիրում է բացարձակութեան տալ Սահմանադրութեան բնագրին վրայ, որ ես կիսապաշտօնապէս մտուցելի նորին Վեհափառութեան: Ես ինքս էլ ընդունում եմ, որ այդ տեղեկագրի մէջ գտնուող յօդուածներից շատերը փոխուելու և բարեփոխուելու պէտք ունին, և ես աւելորդ չեմ համարում ասել, որ եթէ այդ բնագիրը մտուցուած է նորին Վեհափառութեան իբրև պարզ մի ծրագիր, ապագային իր տեսութիւնների և բաղձանայ համեմատ փոփոխուելու նպատակով էր:

«Դէպի իմ Վեհապետս ունեցած հաւատարմութիւնս և իմ սէրս դէպի իմ երկիրս՝ ինձ ստիպում են յայտնելու այն դադափարը՝ թէ երկու միջոց կայ ներկայ տագնապից դուրս գալու: Առաջինը այն՝ որ Կոնփերանսի 1) դուժարութից առաջ իրագործել մեր ներքին վարչութեան վերաբերեալ բարեփոխութիւնները, ինչպէս որ յայտարարեցինք և խոստացանք բոլոր պետութիւններին, և սրա գործադրութեան համար որոշած ժամանակամիջոցը երեք կամ չորս օրից վերջանում է: Միս

1) Իսոցը 1876 դեկտեմբեր 23-ին Ոսկեղջիւրի վրայ նայով ժողովարարութեան մեծ Սրահին մէջ գումարուելիք դեմոկրատիզմի (կոնփերանսի) նկատմամբ է, ուր եւրոպական լիազօրութիւնը, թրքականների հետ միացած, պիտի վիճաբանէին «կայսրութիւնը խաղաղեցնելու և բարեփոխելու հարկաւոր միջոցների մասին»:

միջոցը պիտի լինէր ընդունել պետութիւնների առաջարկը և յանձն առնել յախտեան նրանց խնամակալութեան առկա պարի: Եթէ առաջինը չընդունուի և կամ եթէ Սահմանադրութեան հիւսիսումը յետաձգուի կամ ուշանայ մինչև Կոնփերանսի դուժարութեանը այն ժամանակ՝ երկրորդ միջոցը մեր վրայ պիտի իրադրուի:

11 Ձիլհիճճէ, 1293, Հէճիրի Միջհաս
(25 նոյեմբեր, 1876)

* * *

«Վեհապետի կրօնաբանութիւնը յարգել» բառերը վերաբերում են 113-րդ յօդուածին 2), որ Սուլթանը ուղղւած էր ներմուծել տալ Սահմանադրութեան մէջ:

ՍՄՄԱՆԵԼՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՆ Ը ՀՈՉԱԿՈՂ ՍՈՒՆԹԱՆԻ ՀԱՏՏԻ ՀԻՒՄԱՅՈՒՆԸ

«Իմ Պայծառափայլ Մեծ-վեզիրս Միջհաս փաշա!

«Բաւական ժամանակից ի վեր մեր Կայսրութեան զօրութիւնը պակասել սկսած է: Դրա պատճառը այնքան չպէտք է վերաբերել մեր արտաքին յարաբերութիւններին, որքան այն իրողութեանը, որ շատերը ուղիղ ճանապարհից հեռացած են ներքին գործերի վարչութեան մէջ և մեր հպատակներն էլ պետութիւնից ստուած: Իմ օգոստափառ Հայրս՝ Հանգուցեալ Սուլթան Աբդուլ-Մէջիդը՝ շնորհած էր բարեփոխութեան անկեղծութիւնը՝ թանկիւծաբի փրկարար շնորհիւն էր, որ պետութիւնը մինչև այսօր կարողացաւ սեւել բոլորովին ապահով: Իմ օգոստափառ Հայրս արժանապէս նկատուած է իբրև կայսրութեան վերանորոգիչը: Բայց նախախնամութիւնը մեր թագաւորութեանն էր վերապահած այս երջանիկ բարեշրջումը կատարելու հոգը, որ մեր ժողովրդների բարօրութեան դերագոյն գրաւականն է: Երկնքին շնորհակալութիւնս եմ յայտնում՝ դրա գործիքը եղած լինելուս համար:

«Եւ ահա թէ ինչո՞ւ համար Մեր Դահլը բարձրանալու առթիւ հռչակած նատախ մէջ՝ Մենք յայտարարեցինք մի Պարլամենտ ստեղծելու անհրաժեշտութիւնը: Մասնաւոր մի մանձնախումբ՝ կազմուած ամենայայտնի աւազանիներից, իւրեւաններից և պաշտօնեաններից՝ ինամբքով ձշակած է մեր Սահմանադրութեան հիմունքները, որ յետոյ ուսումնասիրուած և հաստատուած է Մինիստրների Խորհրդից: Այս Հիմնական Օրէնքը որոշում է վեհապետի իրաւունքները, օսմանցիների քաղաքացիական և քաղաքական ազատութիւնն ու հաւատարմութիւնը օրէնքի առաջ, նախարարների և պաշտօնեանների պատասխանատուութիւնն ու դերը, պարլամենտի վերահսկողութեան դերը, դատարանների կատարեալ անկախութիւնը, երկուուսրի գրական հաւատարակչութիւնը, վերջապէս գաւառների վարչական ապակեղմնացումը՝ յարգելով սակայն կեղրմնական կառավարութեան որոշիչ դերակատարութիւնն ու անկախութիւնը»:

2) Այդ յօդուածը հետեւեալն է. «Երբ պետութեան որ և է մէկ մասի մէջ խռովարարութեան յայտարար որ և է դէպքեր ու նշաններ երեւան գան, կայսերական կառավարութիւնը իրաւունք ունի նոյն տեղը դնելու պաշարման վիճակի մէջ: Պաշարման վիճակի հետեւեալով ժամանակաւորապէս դադարում է քաղաքացիական օրէնքի գործադրութիւնը: Պաշարման վիճակի մէջ գտնուող տեղերի կառավարութեան եղանակը պիտի որոշուի յատուկ օրէնքով: Վեհափառ Սուլթանը ձեռն իշխանութիւն ունի պետութեան հողից արտաքսելու այն անձերին, որոնք ստորկանութեան արժանահաւատ տեղիւթիւնների համեմատ վրասակար են ճանաչուած պետական ապահովութեանը»:

1876-ի դեկտեմբեր 23-ին էնք : Այդ օրը Ոսկեղջյւրի վրայ նայող Մովսէսաբեկեան Մեծ-Սրահին մէջ՝ եւրոպական պետութեանց լիազօրները ժողովի են նստած Օսմանեան լիազօրների հետ, — դա Կ. Պօլսոյ դեսպանատնոցը (Conférence) էր, որին եւրոպական պատու էր մէկ ու կէս տարուց ի վեր : Հաղիւ խորհրդակցութիւնները սկսուած էին, երբ յանկարծ թնդանօթի ձախ լուսեց : Թուրք լիազօրը՝ Սաֆֆէթ փաշա՝ սոքի կանգնեց և ասաց. « Պարոններ, թնդանօթի ձախը որ լսեցիք՝ նշան է որ նորին Վեհափառութեան Սուլթանի կողմից Սահմանադրութիւն է հռչակուած՝ որով ապահովուած են՝ աւանց ցեղի և կրօնի խտրութեան, կայսրութեան բոլոր հպատակների յայտնի իրաւունքներն ու ազատութիւնները : Ես կարծում եմ որ այս մեծ բարեփոխութիւնից յետոյ՝ մեր աշխատանքները այլևս աւելորդ են » :

Մինչ Մովսէսաբեկեան սրահի մէջ Սաֆֆէթ փաշան Կոնֆերանսին յայտնուած էր այս մեծ լուրը, դուրսը՝ ժողովրդին կարգաւորուած էր Հասթի Կիւսուսը, լսողները երկիւղածութեամբ համբուրում էին սառեղը և Միահայ փաշան գովաբանում էր իր տիրոջ բարութիւնը. նա ասում էր.

« Մեր օգոստոսիան մերը՝ Սուլթան Եթ-Ել-Համիդ խոնր գալիս է այս Սահմանադրութեամբ իր բոլոր հպատակներին նուիրելու նոր իրաւունքներ, որոնք իբր պայծառ ջահ՝ բոլորին պիտի լուսաւորեն յառաջադիմութեան և քաղաքակրթութեան շաղկի մէջ : Այս միւստի ջահն է, որ տգիտութեան խուարից դէպի լուսոյ ճամբան է առաջնորդած եւրոպական աղգերին, որոնց ազատ հաստատութիւնները փրկարար օրինակ են հանդիսացած ամբողջ տիեզերքին » :

« Այս Սահմանադրութիւնը, որ մեր շնորհալի Վեհապետը բարեհաճած է մեզ տալ՝ գերազանց մի գործ է, որով նորին Վեհափառութիւնը ազգի վերանորոգիչը պիտի յայտարարուի : Ուրեմն մեր հայրենակիցները իրենք իրենց պիտի շնորհաւորեն՝ մեր Վեհապետի նման մի լուսաւորեալ թագաւորի սիրելի հպատակները լինելու պատիւն ունենալուն համար :

Սահմանադրութիւնը այլևս յայտարարուած է : Արիւնուաբոյսոյ միւստի աղօթքներ է կարդում, թնդանօթի հարկը մէկ հարուած է արձակուած, իւլէմաներ, քահանաներ, սօֆթաներ դրօշակներ ձեռքերին թափօրի են դուրս գալիս : Տեղի են ունենում լուսավարութիւններ. գաւառները անթիւ հեռագիրներ են թափուած. Մեծ-Եպարքոսը այցելութիւն է տալիս Պատրիարքարաններին, յոյն տղաները դասնեպակներով զարդարուած՝ յոյն մի բանաստեղծի յօրինած երգն են երգում և Միահային փառաբանում, խաչն ու ծահիկը իրարու են համբուրում, գիրկընդխառնուածը, ուրախութեան, ցնծութեան արցունքները ընդհանուր են . . .

Դեսպանատնովը ցրուած էր : Սահմանադրական ցոյցերը ամբողջին գոհացում տուած լինելով՝ ընդհանուր տրամադրութիւն էր ստեղծուել վերադառնալ նախկին սովորութիւններին և բարքերին : Միտհատ փաշան այդ ժամանակ յառաջ է մղում Դահլիճի (Cabinet) խնդիրը՝ Յունուար 30-ին նա գրում է.

Արքայ, « Սահմանադրութիւնը հռչակելով՝ մեր միակ նպատակն էր բացարձակ իշխանութիւնը տապալել, Ձեր Վեհափառութեան ցոյց տալ իր իրաւունքներն ու պարտքերը, որոշել և հաստատել նախարարներինը, վերջապէս ազգին ապահովել կատարեալ ազատութիւն և երկիրը բարձրացնել ճիւղաւոր ջանքով : Հակառակ միւս Հատար-Հիւճալունների տրամադրութեան — որոնք երեսուն տարիներից ի վեր տրուած են —

նոր Հատար պէտք չէ որ մեռեալ տառ մնայ. նա պէտք է ամբողջութեամբ իրագործուի՝ հակառակ այժմեան տագնապին, որովհետև Սահմանադրութիւնը հռչակելով՝ մենք ո՛չ ուղեցինք Արևելեան Խնդրոյն լուծում տալ և ո՛չ էլ ուղեցինք պարզ ցոյց անել եւրոպային՝ որ մեզ հակառակ է՝ որպէսզի նրա համակրանքը դէպի մեզ գրաւենք :

« Ես խորին յարգանք եմ տածում դէպի Ձեր վեհափառութիւնը, բայց ես պէտք է հրաժարուիմ, Արքայ, Ձեր հրամաններին հնազանդելու ամէն անգամ, որ չեն համաձայնել ազգի շահերին : Ես երկիւղ եմ կրում իմ խղճիս խայթից, որին երդուած եմ իմ բոլոր գործերս յարմարեցնել, ինչոր կարող է ապահովել Հայրենիքի վրիճաթիւնն ու բարգաւաճումը :

« Ահաւասիկ շուտով կլրանայ ինն օր, Արքայ, որ Դուք գտնեց էք առնում իմ խնդրանքներս կատարելու : Դուք մերժում էք երկրի երջանկութեան համար եղող անհրաժեշտ օրէնքները վաւերացնել, աւանց որոնց, սակայն, մեր ձեռնարկը անպատու դիտել մնայ : Երբ Ձեր նախարարները ջանք են թափում, մեծ դժուարութեամբ, կառավարական շէնքը վերանորոգելու, որ հաղիւ կարողացաւ աւելումից ազատուիլ, կարող եմ ասել, որ Ձեր Վեհափառութիւնը ջանք է անում այն քանդելու : »

Միահայը ձերբակալուած, արքայուած է որպէս « գաւազի » : Գործակովը յունուարի 31-ին, 1877, բաց է թողնում մի շրջաբերական, որով Ռուսիան պետութիւններին առաջարկում է հաւաքական միջամտութիւն, եթէ ո՛չ ինքը միայն պիտի կարգադրէ ամէն ինչ : Իգնատիէվ գորավարը եւրոպական դահլիճներին այցելելով յայտարարում է, որ Դուք առաջինը անարգած լինելով Պարիզի դաշնադրութիւնը, Թիւրքիայի անկախութիւնը և ամբողջութիւնը այսուհետև անիմաստ բառեր են : Անգլիան վարանման մէջ է ընկնում, նրան մասնաւորապէս սիրաշահելու համար՝ Եթ-Ել-Համիդը մարտ 19-ին, 1876, Պարլամենտը բաց է անում հեռեկայ գահաճառով.

« Պարոն ձերակուտականներ, « Պարոն երեսփոխաններ, « Չափազանց մեծ գոհունակութեամբ է, որ բաց եմ անում կայսրութեան Պարլամենտը, որ այսօր առաջին անգամ լինելով գումարուած է : Դուք պիտեք որ պետութեանց և ժողովրդների մեծութիւնն ու զօրութիւնը յնուած է արդարութեան վրայ . . .

« Քաղաքակրթուած պետութիւնների ձեռք բերած յառաջադիմութիւնը, նրանց ունեցած ապահովութիւնը և հարստութիւնը պատու են ամէնքի մասնակցութեամբ օրէնքներ հաստատելու և ընդհանրական գործերը կառավարելուն մէջ :

« Ես պէտք համարեցի մեզ համար էլ փնտուել յառաջադիմութեան հասնելու միջոցները՝ մեր օրէնսդրական սխտեմին իբրև հիմք ընդունելով ընդհանուր քուէարկութիւնը, և ահա այս նպատակով է, որ ես հռչակեցի Սահմանադրութիւնը . . .

« Ներկայ նստաշրջանի ժամանակ դուք շատ ծրագրերի պէտք պիտի ունենայք. — Խորհրդարանի ներքին կանոնադրութիւն, ընտրութեան օրէնք, ընդհանուր օրէնքներ վիլայէթների և գաւառների համար, քաղաքապետական օրէնքներ, դատաստանական օրինագրքեր, դատարանները վերակազմելու համար օրէնքներ, դատաւորների կարգը բարձրացնելու նրանց համար հանգստեան թոշակ կարգադրելու, մամուլի վրայ օրէնք, հաշուակալութեան ատեսանի օրէնք, օրէնք վերջապէս երեւոյց վրայ . . .

« Իմ յարաբերութիւններս օտար պետութեանց հետ համակուած են միշտ այն բարեկամութեամբ և այն յարգանքով

որոնք իմ կայսրութեան ամենահարուստ ամենաթիւնն են կազմում: Նորին բրիտանական վեհափառութեան կառավարութիւնը, մի քանի ամիս առաջ առաջարկած լինելով իմ մայրաքաղաքիս մէջ կօնֆերանս կազմել և միւս պետութիւնները միևնոյն բանը խնդրած լինելով իմ Բարձրագոյն Գուռս Համաձայնեցաւ այդ կօնֆերանսին: Եթէ այդ կօնֆերանսը վերջնական եղբակացութեան չչանդեցաւ, մենք գոնէ ցոյց տուինք որ պատրաստ էինք պետութեանց բարեկալութիւններն ու խորհուրդները՝ իրենց կիրառութեան մէջ՝ կանխել, եթէ դրանք կարող են Համաձայնի դաշինքների, միջազգային իրաւունքների հետ և հրամայական պէտք են մեր դիրքին և մեր իրաւունքներին:»

ԽՈՐՀՐԳԱՐԱՆՈՒՄ

Օսմանեան Պարլամենտի նախագահն է Ահմէդ Վէֆիդ Էֆէնտի, որ Միզհատի հակառակորդներին է և «վիճաբանութիւնները շատ մեծ եռանդով է վարում, աւելի իր անձնական գաղափարներն է յայտնում, և վիճաբանում ու վիճաբանում: Եկ խօսքով նա ծուռանում է որ «Խորհրդարանի նախագահի դերը կայանում է աւելի նուազադեփոխ քան թէ նուազորի պաշտօնի մէջ»:

Ահմէդ Վէֆիդ Էֆէնտին դիտէ իր հակառակորդներին լռեցնելու ձևը՝

— «Մուսուլն»! (լռեցէ՛ք)

— «Է՛վէթ, Էֆէնտի, (այս՝ Էֆէնտի):

Ժողովուրդը այդ Խորհրդարանը անուանեց՝

« Է՛վէթ Էֆէնտի Ժողով »:

Սակայն փոքրամասնութեան մէջ, մանաւանդ «քրիստոնեայների», կային կարող ճառարարներ, որոնք յանդուրդն կերպով ազատ խօսքեր էին արտասանում:

Գահաճառի մէջ ասուած էր. « Իմ նախորդներս երբէք արդէք չեն եղած խղճի և կրօնքի ազատութեան և այս սկզբունքի մէկ հետևանքով, որ բարձր արդարութիւն է, իմ անձուէր ժողովուրդներս կարողացած են պահպանել իրենց ազգային յասկանիշը, իրենց լեզուն և իրենց կրօնքը . . . »

ՈՒՂԵՐՁԻ ընթերցման ժամանակ թուրք տեղեկատու զանց է անում «ԼեՂՈՒ» բառը:

Կ. Պօլսի յոյն երեսփոխանը բողբոքում է.

— « Մենք չենք կարող թոյլ տալ մէկ բառի դանդաղութիւնը, որ առանձնաշնորհումների ամենազլաւորն է ներկայացնում: Մեզ՝ յոյներիս համար՝ մեր լեզուն մեր հարստութիւնն է, տրամաբանութեան հակառակ պիտի լինի և անպատկառ դէպի նորին վեհափառութիւնը՝ լուրթեամբ անցնիլ մի բանի վրայից, որ նոյն ինքն արդէն հաստատեց »:

Նախագահ. — « Այդ չէ ինչիւրը, մենք այստեղ ուրիշ լեզու չենք կարող ճանաչել, բայց թուրքերէնից »:

Երեսփոխանները. — Շա՛տ լաւ, կատարելապէս լա՛ւ: Հայ երեսփոխանը Յոյնի ասածը կրկնում է:

Նախագահ. — Այդ չէ ինչիւրը: Ես արդէն ժողովի գաղափարը պիտի հարցնեմ տեսնելու համար թէ իմիսիս համապատասխան է:

Երեսփոխանները. — Էվէթ Էֆէնտի, Էվէթ Էֆէնտի:

Խորհրդարանին է ներկայացրում Մօնթէնէզրօի խաղաղութեան պայմանները. «քրիստոնեայ» փոքրամասնութիւնը ընդունում է: Արտաքին գործոց նախարարը բացատրում է թէ մերժումը Ռուսաստանի հետ պատերազմ պիտի պատճառէ, թէ Թիւրքիան առանց զաշնակցի է, առանց միջոցի թուրք հայրենասէրները, մանաւանդ Ալեքանդրները, ոչինչ չեն ուզում լսել:

— « Գուրք խօսում էք, ասում է մի քուրդ երեսփոխան, երևմտական դժուարութեանց մասին. Ինչպէս ձեզ հաւատալ

այս փարթաճութեանց, այս փայլուն համազգեստների, փառաւոր տների և հարուստ կառքերի հանդէպ: Թըշւաւութիւն տեսնելու համար՝ եկէք մեր կողմերը: Ինչպէս մեր այնտեղի մարդիկը՝ ես էլ հին շորեր ունէի. այստեղ՝ ա՛յսրան փարթաճութեան առաջ՝ ես ամաչեցի և շատ մեծ դժուարութեամբ գնեցի այս զգեստը: Արդ, եթէ հարկաւոր լինի՝ իմ երկրիս փրկութեան համար, որպէսզի ո՛չ որ չմիջամտէ մեր գործերի մէջ, ես կձախեմ այս զգեստը և նորից կհագնեմ իմ հին շորերս »:

Նախագահը հարց է դնում. « Խորհրդարանը վստահանում է նախարարութեան խելօրութեան և հայրենասիրութեան վրայ, որպէսզի իր բանակցութիւնները շարունակէ Մօնթէնէզրօի հետ »:

Տասնևութ երեսփոխաններ՝ Հայ և Յոյն ընդունում են որ բանակցութիւնները շարունակուին:

Մեծամասնութիւնը ամէն տեսակի բանակցութիւն մերժում է:

Կառավարութիւնը յայտարարում է, որ « Իր դարձ է նկատում երկէ՛ր կառնէ՛ն հարաբանէ »:

Ապրիլ 19-ի շրջաբերականով Բ. Գուռը բողբոքում է Լօնդօնի մէջ տրուած «առանց իր ճամակցութեան» որոշումները դէմ, որ ցանկանում են իրեն վրայ ծանրացնել՝ «հակառակ Թիւրքիայի անկախութեան»:

Այդ շրջաբերականը ներկայացրում է Խորհրդարանին, որ աճապարում է « իր յարգանքը յայտնել այն իմաստութեան համար, որով այդ շրջաբերականը չդացրուած և խմբադրուած էր » և հաստատում է «միաձայն հաւանութեամբ Բարձրագոյն Գրան որոշումը, որովհետև նա բնատրութիւն ունի անբացօրէ կայսերական կառավարութեան իրաւունքներն և անձեռնմխելիութիւնը, մի բան՝ որ կայսրութեան բոլոր հաւատարիմ հրատակների փափաքն է »:

Խորհրդարանի մէջ վիճաբանութեան նիւթն է «Էլեւթի-Ների չրք, օրէ Իը»: Խօսում է տեղական խորհրդների կազմակերպութեան մասին:

Ամէն մէկ խորհրդի մէջ, ասում է նախագիծը, վեց երեսփոխան պիտի լինի, որոնց երեքը խրամ, իսկ երեքը ոչ-խրամ:

Նախագիծը իրամիտներին տալիս է մեծամասնութիւն, քանի որ պետական տեղական պաշտօնեաները իրաւունք պիտի ունենան նիստերին մասնակցելու:

Քրիստոնեաները բողբոքում են, ասելով որ բոլոր հրատակները, առանց խարութեան, ըստ սահմանադրութեան, համահաւասար իրաւունքներ ունին. և քանի որ խորհրդներից դուրս են մնում քրիստոնեայ կրօնական պետերը, խնդրում են որ, ուրեմն, մերժուին նաև Ք-Ֆ-Պ-Ն-էրը՝ պետ մահ-մեղական հասարակութեան:

«Գիտցէք, ասում է նախագահը, որ Ք-Ֆ-Պ-Ն կրօնական յատկութիւն չունի, թէպէտ այդ սխալ գաղափարը շատ տարածուած է, նա Ք-Ֆ-Պ-Ն է, այսինքն օրէնքի ներկայացուցիչը »:

Եւ կառավարական նախագիծը քուէարկում է:

Խորհրդարանի վիճաբանութեան առարկան է բիւռջէն: Հարկաւոր է հինգ միլիոն ոսկի Ռուսաց դէմ պատերազմի երթալու համար:

Ընդհանուրի յոյսն է որ Լօնդօնի բանկերը չպիտի մերժեն «խորհրդարանական» փոխառութիւնը: Ընտրուած է մի Յանձնախումբ՝ տասնևմէկ անդամից բաղկացած — չորս մահ-մեղական և եօթը քրիստոնեայ — դրամ գտնելու համար: Եւ որովհետև անգլիացիները մերժում են, քուէարկում

է քանի փոխառութիւն անել երկրի մէջ, — կալուածատէրերի և վաճառականների եկամտի 10 0%-ը և ստորադասների երկու անգամը առնել . . .

Փոխառութիւնը քուէարկուելուց յետոյ՝ Խորհրդարանը լուծուած է (յուլիս, 1877) :

“Վերագործէք ձեր դաւանները, ստուծ է նախագահը, և այնտեղ պտտրաստեցէք ընտրութիւնները, որպէսզի խելացի և երկրի պէտքերին համապատասխան երեսփոխաններ ուղարկէք” :

* * *

Այս առաջին “պարլամենտը”, հակառակ իր տկարութեան, ցոյց էր տուել, որ քրիստոնեաների և ժողովրդականների միջև ծիւղիւնը և համերաշխութիւնը անկարելի չէր թի կարգ ընդհանուր խնդիրների մասին :

* * *

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Խորհրդարանը նորից բացուած է՝ համաձայն “տաժամահակեայ” թի հրահանգի :

Ընդգրկմովը տարրը այս անգամ աւելի ուժեղ է .

ԳՆԷՆՏՆՈՒՐ կոչ է անուծ բոլոր հպատակներին համերաշխել “կայսրութեան իրաւունքները պահպանելու համար” և նորից կրկնուած է թէ կայսրութեան փրկութիւնը “Սահմանադրութեան կիրառութեան մէջն է կայանուած” :

Գտնուած են յանդուգն երեսփոխաններ, որոնք պահանջուած են որ “պարլամենտական վերահսկողութիւն լինի ֆինանսների վրայ”, ճամաւոր միջոցներ ձեռք առնուին զեղծարարների, անկարող պաշտօնեաների և կաշառակեր դատարանների դէմ, որպէսզի “տիրող ընթիմի անաճօթութիւնները դուրս գան” : — “Ի՞նչ վիճակի մէջ, ասուծ է թի երեսփոխան, ստիկանները կողպուած են ժողովրդին, դատարանների պաշտօնեաները պահետի դրած դրամները գողանուծ են և ստորադասները ամեն տեսակ ծեծ ու չարչարանք են տալիս ժողովրդին” :

* * *

Մի քանի թուրք ազգամուրներ ուղուծ են ժխտել, կամ ներել բուլղարական խփոթութիւնները : Մի երեսփոխան ասուծ է. “Խորհրդիւնները աւելի քան ակնյայտնի են, աւերակները դեռ մնացած են, վիակները դեռ այնտեղ են . կառավարութիւնից անմիջական քննութիւն խնդրենք, ինչպէս և յանցաւորներին” պատիժ :

* * *

Մի խումբ երեսփոխաններ պահանջուած են հինգ նախարարների հետացուծը, որոնց մէջն են Տամատ Մահմուտ Ձէլալէտաօլին և երկու Սայխաները . պահանջուած են նաև դատաւարութիւնը ամէն նրանց, “որոնք” Կայսրութեան տւերուծը արագացրել են և պատերազմի ժամանակ իրենց պարտականութեան մէջ թերացել ”(1) :

* * *

Խորհրդարանի մէջ ընդգրկմովը մտք իր ձայնը հետզհետէ աւելի է բարձրացնուած : 1877-ի դեկտեմբերից մինչև 1878-ի յունիսիսին Խորհրդարանը շահեկան պայքարի մրցարան է դառնուած : Պալատը այդ բոլորը լռելեայն ասնուծ է, որովհետև անհրաժեշտ է Սահմանադրական արտաքին երկուցիք պահել, քանի որ Ազգային իր բարեկամութիւնը միայն այդ պատճառով էր շուայուծ թիւրքիային :

1) Ընդհանուր գրոյց կար, թէ թուրք հրամանատարները և բարձր աստիճանաւորները կաշառուել են սուսներից և այդ պատճառով էլ տեղի են ունենուծ թիւրքական պարտութիւնները :

1878 փետր. 3-ին Սուլթանը ջնջուծ է Մեծ-վեզիրութեան պաշտօնը և նրա տեղ դնուծ է Առաջին նախարարը . . . ինչպէս Եւրոպայի մէջ :

Այդ Առաջին նախարարը լինուծ է Ահմեդ Վէֆիկի փաշան, որ Առաջին Խորհրդարանի նախագահն էր : Սա նոր Խորհրդարան եկա՝ յայտարարեց թէ .

“Սուլթանը անկեղծաբար ջանկանուծ է Սահմանադրութիւնը պահել, և այդ պատճառով է, որ նա իր առանձնաշնորհութիւններից մէկը դուհեց, Մեծ-վեզիրութեան պաշտօնը ջնջելով : Նոր նախարարները միայն մէկ նպատակ պիտի ունենան, որ է՝ Կայսրութեան փրկութիւնը և յառաջալիծութիւնը : Նրանք միշտ Խորհրդարանի տրամադրութեան տակ պիտի լինին, բայց խնդրուծ են ներողաժիտ լինել, եթէ ներկայ դժուար պարագաներուծ փոխանակ իրենք գալու ներկայացուցիչներ են ուղարկուծ” :

Թուք է լինուծ շորհուածութեան ուղեքի մէջ ընդգրկմադրական ոգի ներմուծել : Պարալլախներից մէկը նկատել է տալիս, որ միայն Խորհրդարանը իրաւունք ունի այդ կարգի կարևոր փոփոխութիւններն անելու : Եւ որովհետև նախախագահը և ծեծածանութիւնը զայրացած ուղուծ են այդ “ուղեքի” մարդու ձայնը խեղդել, նա ասուծ է. “Դուք անդադար խօսուծ էք ձեր յարգանքի մասին դէպի Սահմանադրութիւնը, յարգեցէք, ուրեմն, և՛ ձեր ազատութիւնը, որովհետև այս բոլեքին մենք ենք որ Սահմանադրութիւնը պաշտպանուծ ենք և դուք էք՝ որ պղծուծ էք” :

* * *

Ռուսական յայթիական բանակները առաջ են արշաւուծ : Ռուսները համաձայնուծ են Կազանլըքի և Ադրիանուպոլոյ (31 յուն.) սկզբնական համաձայնութեան : Աստրիան առաջարկուծ է Վիեննայի մէջ դեպատմաժողով գուծարել՝ Պարլիզ դաշնադրութիւնը ստորագրող պետութեանց ներկայացուցիչներից, “որպէսզի ազագայ ուս-թրքական համաձայնութիւնը կարելի լինի ներդաշնակել Թիւրքիայի նախկին դաշնադրութիւնների հետ” :

Անգլիան իր նաւատորմիւն է ուղարկուծ Մարմարայի ծալը :

Արդ-իւ-Համիլը այլևս ներքին բարենորոգումների պէտքը չի դուծ, նա իր յոյսը դնուծ է պետութիւնների հակաշահութեան վրայ և այդալիտով ուղուծ է ամէն դժուարութիւնից դուրս գալ :

Փետրուարի 12-ին Սուլթանը կազմուծ է Մեծ դիւան : Արդի և նախկին նախարարների հետ միասին հրաւիրուծ են Խորհրդարանի հինգ անդամներ էլ — նախագահը, երկու փոխ-նախագահները, մին ժողովրդական ժողովրդից՝ Ահմեդ էֆենդի և մէկ էլ հրէայ : Սուլթանի ծիւղն է կտտարեալ վաւերացուծն ստանալ ապագային առնուելիք բոլոր սրջուծների մասին՝ Անգլիայուց և կամ Ռուսաց արուելիքների նկատմաժը : Բայց նա ժողովրդական անկեղծութիւնը դեռ դէժ առ դէժ չէր տեսուծ : Մինչ բոլոր միւսները խանարհուծ են նորին Վեհափառութեան ամէն բարձանքների առաջ, Ահմեդ էֆենդին՝ կտտար վաճառականների պետը՝ “անպատկառ” կերպով ասուծ է. “Դուք ձեր գաղափարը շա՛տ ուշ էք հարցնուծ : Մեր խորհուրդները հարցնելու էիք լրջօրէն՝ երբ դեռ կարելի էր չարիքից խոյս տալ : Խորհրդարանը բոլորովին ծեծուծ է իր վրայ տուել թի դուրսութեան պատասխանատուութիւն որ ստեղծուած է իրենից դուրս : Բայց դրանից՝ ընու կարեւորութիւն չաւելին իր խորհրդիւնիւն իր որոշումներից և ո՛չ մին պորժադրուեցաւ : Եւ կրկնուծ էմ, նա ծեծուծ է ամենայն պատասխանատուութիւն՝ այժմեան ստեղծուած դժբախտութիւնների առթիւ” :

ՍՈՒԼԹԱՆԸ ԻՆԵՒԻ Է ԳԱԼԻՍ

Սուլթանը այլևս չի կարողանում իր բարկութիւնը գտել: "Ես սխալ ճանապարհի մէջ եմ ծնել, ատուք է նա, երբ ուզում էի Հօրս Արդ-իւլ-Մէջիդին նմանիլ, որ ուղեց բարեկորուածներ ներմուծել և ազատական հաստատութիւններ հիմնել: Ես պիտի բարեւ իմ ձեռն Հօրս (պապիս)՝ Սուլթան Մահմուտի շաղով: Ես էլ նրա պէս հիմա հասկանում եմ թէ ծիան բռնութեամբ կարելի է քաղցեցնել օտաւ այն ժողովրդներին, որոնց սահպանութիւնը Աստուած ինձ է յանձնել":

ՌՈՒՍԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆԸ

Ռուսաստանի Հեռ յարաբերութիւնները վերահաստատուում են: Ռուսիոյ նոր դորձակատարը Օնու խիստ նկատողութիւն է անում թուրքիոյ Սահմանադրութեան մասին . . .

ԹՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Վերջապէս՝ 1878-ի փետր. 14-ին՝ Առաջին Նախարարը Խորհրդարան է գալիս և կարգում կայսերական հրովարտակը, որով Խորհրդարանը անորոշ ժամանակով լուծուում ու ճանապարհ էր դրուում . . .

ՎԵՐՋԱՐԱՆ

Եւ 1878-ից մինչև 1908-ը, երեսուն տարի շարունակ, "Սահմանադրութիւն" բառը արտասանելը քրէական ձեռն յանցանք էր համարուում և հեղինակները իրենց գործած "ոճիր" ը քաւում էին կա՛մ կախաղանների վրայ, կա՛մ խաւարոջին բանտերում, կա՛մ քարտափայտերում և կա՛մ Մարմարաչի ծովայտակում:

Սա երեսուն ու երկու տարի առաջ էր:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹԻՒՆ

Պատճախան այդ էջերից արտայայտուում են Հեռ տեւեալ իրողութիւնները.

Ա) Սուլթան Համիդը «Սահմանադրութեան» սրբատով յարած չէր, նա սկզբում սահմանադրութեան երդուելը միջոց դարձրեց Գահը ձեռք բերելու և յետոյ բարդուած քաղաքական դժուարութիւնների առաջն առնելու: Եթէ առաջինի մէջ յաջողուեց, երկրորդի մէջ՝ բնաւ երբէք:

Բ) «Սահմանադրութիւնը» վիճեց, որովհետև Կեդրոնական Իշխանութիւնը շատ զօրեղ էր: Սուլթանը աստիճանաբար ամէն ինչ իր ձեռքն առաւ: Եւ իր ժամանակին՝ Սահմանադրականների ամենամեծ սխալը այն եղաւ, որ նրանք օր առաջ չաշխատեցին Կեդրոնական Իշխանութիւնը թուլացնել, նրա վարկը ձգել և ամէն տեսակէտով անդամալուծել, — դա է՛ն կարևոր սխալն էր՝ որ գործուեցաւ ժամանակին: Փոխանակ դրան՝ մենք տեսնում ենք որ «ազատամիտ», «սահմանադրական» կարծուածներն իսկ օրէնքը, «Հիմնական օրէնք» ը անեղծ և իր զօրութեան մէջ թողնելով երեսխալի պէս խաբուում են Սուլթանի երկդիմի, մեղրածորան բաւերից և ընկնում են նրա կանխապէս մտածած ցանցերի մէջ: Սուլթանը սկզբից ի վեր բաւականին զօրեղ փաստեր էր տուած իր անուղղամտութեանը, առաջին վաչրիկանից իսկ նա ոտքի տակ էր առել իր առած խոստումները. իրեն սահմանադրական յայտարարելով հանդերձ՝ սահմանադրական արքայի վերաբերեալ տողերը ամենայն համարձակութեամբ ջնջում է և «սահմանադրական», «ազատամիտ» կոչուած մարդիկները այդ ստիճաններից չեն օգուում ո՛չ միայն արքային ուղղութեան հրաւիրելու, այլև նրա իշխանութիւնը թուլացնելու, և ահա Հէնց այդ թուլութիւնից էլ օգտուեց Սուլթան Համիդը, — կործանեց իր հակառակորդներին և հաստատեց միահեծան այն իշխանութիւնը, որ 32 տարուց

աւելի վարեց և երկիրը սրի ու աւերածութեան մատնեց: Պատճախան այս դասը չպէտք է մոռանալ, որովհետև շատ ցայտուն կերպով նա իր տեղն ունի բռնած ժամանակակից պատմութեան մէջ:

Գ) Սուլթանը մի անգամ որոշած լինելով իր վզին փաթաթած «սահմանադրութիւնից» ազատուել՝ դիմում է մի ուրիշ մաքրավէլական միջոցի էլ, — դա արտաքին խնդիրներն են: Պետական կեանքի մէջ արտաքին և ներքին խնդիրները անանցանելի պատնէշներով իրարուց չեն պատուած, նրանք իրարու շարունակութիւն են կազմում և մէկը միւսի վրայ զրականապէս և զօրեղ կերպով ազդում: Այդպէս էլ եղաւ այդ օրերում: Բօսնիա-Հերցեգովինայի ապստամբութեան, բուլղարական կոտորածների, սերբիական և ռուսական պատերազմների խնդիրներ կապին, — այդ բոլորից նա օգտուում էր սահմանադրական ըէժիմի թոյլ կողմերը ցոյց տալու, իսկ բացարձակապետութեան՝ առաւելութիւնները, և որոշեալ յատակագծով ընթանալով՝ «Սահմանադրութեան» վարկը այնպէս է կոտրում, որ երբ ջնջուելու ըրպէն է գալիս՝ ո՛չ ոք ձայն անգամ չի հանում: Սուլթանը զուցէ այնքան շուտ չկարողանար իր թեօկրատական բացարձակապետութիւնը վերահաստատել, և նոյն իսկ «խորհրդակցական» մի պարլամենտ աւերող համարել չտար Թիւրքիային, և թէ արտաքին խնդիրները իրեն օգնութեան չկան չէր և ճարպիկ կերպով նրանցից չօգտուէր: Այս էլ մի ուրիշ խրատական դաս է, որ երբէք աչքից բաց չպիտի թողնել:

Դ) Որպէսզէլ շօշափելի կերպով ցոյց տայ «խորհրդակցական» պարլամենտի անպէտք լինելը և նրա նոյն իսկ վնասակարութիւնը թուրք և միւսլիման տարրի համար, սուլթանը մի կողմից հաւասարութիւն, արդարութիւն, եղբայրութիւն է գոռում. միւս կողմից՝ ո՛չ միայն ձեռքի տակից, այլ անկայտանի կերպով թուրք և միւսլիման տարրի արգաչական բնազդներն է զրգում և «քրիստոնեայ», «ռայեայ» արտոգամաւորների ամենափոքր համարձակախօսութիւնից օգուում է «խլամ» տարրին ցոյց տալու, թէ իրենք քաղաքականապէս և ընկերականապէս այլևս ՏԻՐՈՂ, ՏԱՐՐ չեն հանդիսանալ, եթէ այդ բաւերը ճշմարտօրէն գործադրութեան մէջ մտնեն և իրականութիւն դառնան: Արգաչականութիւնը (նայտոնալիզմ) մի ուրիշ տարր է եղել, որ օգնութիւն է տուել Սուլթանին իր հակասահմանադրական նպատակներին հասնելու, — նա դրանով շոյել է մահմեդական ամբողջ ամենազգացուն ջիդերը:

Ե) Հակառակ ընդերկրեայ ամէն ջանքերին՝ «Պարլամենտ» ի ծոցի մէջ դարձեալ որոշ աստիճանով պատկերանում է հարստահարուող, գովուող, անխնայ շահագործուող ժողովուրդը՝ առանց լեզուի և ծագման խտրութեան: Եղել են ըրպէններ, որ ժողովրդի ներկայացուցիչները — ինչքան էլ սահմանափակ քուէով որ ներկայացած էին — տեսել են թէ իրենք՝ հայեր, թուրքեր, քուրդեր, յոյներ՝ միասնական շահեր ունին ընդդէմ այն կեդրոնական իշխանութեան, որ բոլորին էլ ուստի է և որը սուսուլու այդ գործողութեան և եղանակների մէջ խտրութիւն չէր դնում՝ ռայեայի և ոչ-ռայեայի միջև: Որքան որ դասակարգային դիտակցութիւնը սողմնալին է եղած, այնուամենայնիւ նա որոշ ըրպէններում և որոշ հարցերի

առթիւ երևան է եկած և ցոյց տուած թէ նա ի՛նչ մեծ արդիւնքներ կարող էր տալ, եթէ աւելի գիտակցորէն և աւելի լայն ծաւարով առաջ եկած լինէր: Ուր կայ դասակարգ — և նա կայ՝ ուր ընկերութիւն կայ — այնտեղ անպատճառ դասակարգային գիտակցութիւն պէտք է յառաջ բերել և դասակարգային հողի վրայ էլ կանգնել. այդպիսի ուղղութեամբ մղուած պայքարներն են, որ որոշ, զրական ու տեական արդիւնք են յառաջացրել, այսպէս է ասում յառաջագէտ ազգերի քաղաքական կեանքի պատմութիւնը: Բուրժուազիան՝ անտուկղերական դասակարգի դէմ. պրօլետարիատ, աշխատաւոր, գործաւոր, արհեստաւոր, հողագործներ և փոքր հողատէրեր՝ բուրժուազիայի և ազնու-եկեղեցական դասակարգերի դէմ, — սա է եղել պատմական շարժումների փիլիսոփայութիւնը: Դասակարգ եղած տեղը՝ դասակարգային հողի վրայ չկանգնելը և պայքար չբնդելը աղէտալի է եղել և պատմական մեծ սխալների տեղի տուել, — այդպէս է եղած և՛ այն օրերում՝ որի մասին է մեր խօսքը:

2) Պատմութեան մէջ, դասակարգերի կռուի մէջ՝ ուղում ենք ասել, խոստում, ձեւակերպական օրէնքներ՝ դրանք որևէ նշանակութիւն չեն կարող ունենալ յարատեւութեան և արդիւնաւէտութեան տեսակէտից: Խոստում, օրէնք՝ դրանք այնքան նշանակութիւն ունին, որքան որ նրանց իրականացման և յարատեւման պայմանները հաստատուն կերպով երաշխաւորուած են: Սուլթանը տալիս է առատ շրջուցիչ խօսքեր և խոստումներ, նա չի վրանում նոյն իսկ օրէնքներ, բայց ժամանակի « ազատամիտ », « սահմանադրական » տարրերը մոռացել էին ձեռք բերել, իրենց տիրապետութեան տակ ունենալ է՛ն ամենանշանաւորը, որ այդպիսի բողբոջներում միայն կարող է իրական նշանակութիւն ունենալ, — այն է՝ հակակշիռը՝ երաշխաւորութիւնը, որով արդարեւ խոստումը կմնայ խոստում և օրէնքը՝ օրէնքը, ու այդ բոլորը իրական կեանքի բաժինը կկազմեն. — եթէ ո՛չ, շատ դիւրին է խօսքը և օրէնքը ժամանակաւոր յաջողութիւն և ներկայացուած դժուարութիւններից դուրս գալու միջոց դարձնել ու մի անգամ ճանապարհը հարթուած՝ այնուհետեւ երէկուան սուածը այսօր ոտքի տակ առնել և նոյն իսկ փաստել թէ այդպէս անհրէ՛ք օգտակարը: —

Սուլթանն Հաճիզը երակի վարպետ է եղել այդ խաղերի մէջ:

Ե) Դիտելիք մէկ կէտն էլ այն է, որ ինչպէս Սուլթանն Համիդը, նոյնպէս և ժամանակի շատ « ազատամիտ »ները մինչև իրենց ուղն ու մուծը եղած են թունդ ազգայնականներ (նացիօնալիստներ) և բացի դրանից՝ արտաքին քաղաքականութեան նկատմամբ նըրանք բոլորն էլ նոյն հայեացքներն են ունեցած, — մասնաւորապէս ինչոր վերաբերում էր Սերբիային, Սօնթէնէզրօյին և Բուլղարական կոտորածներին:

Ը) Նկատողութեան առնելիք մի ուրիշ հետաքրքիր երևույթ էլ որ կայ, — դա փոքրամասնութեան և մեծամասնութեան յարաբերութիւնն է: Պարլամենտարիզմի թերութիւններից մէկն էլ այն է, որ փոքրամասնութեան ձայնը չաճախ խեղդում է: Այս դէպքում մեծամասնութեան քուէն է, որ տեսականապէս շարունակում է եւթադանի թէօրիան: Կառավարութիւնները և տիրող տարրերը աշխատում են պարլամենտի մէջ մեծամասնութիւն գոյացնել, որպէսզի այդ կերպով

իրենց տիրապետութիւնը և շահերը ապահովեն: Բայց այդպէս անողները մոռանում են պատմութիւնը: Մեծամասնութեան քուէն կարող է փոքրամասնութեան ձայնը խեղդել, այսինքն յարուցուած և իրենց շահերին ներհակ նկատուած խնդիրների վճռուելը յետաձգել, բայց դա չի նշանակիլ խնդիրները վճռել: Եւ ի՛նչ է լինում զրա հետևանքը, — այն՝ որ փոքրամասնութիւնը այնուհետև աշխատում է գտնել այլ ուղիներ և նրանցով ընթանալ իր ձայնը լսեցնելու և իր իրաւունքները յարգուած ու գործադրուած տեսնելու համար:

Բօսնիա-Հերցեգովինայի ապստամբութեան, բուլղարական կոտորածի խնդիրներ կախն մէջտեղ: « Սահմանադրական կառավարութիւնը », մեծամասնութեան քղանցքի տակ, խեղդեց փոքրամասնութեան ձայնը և անցկացրեց իր ցանկութիւնները: Խօսելով պարլամենտական լեզուով՝ փոքրամասնութիւնը որ արդարութիւն և ուղիղ լուծում էր պահանջում, — յաղթուեց: Բայց յաղթուեց: Պատմութիւնը այսօր ասում է, որ իսկական պարտութիւն կրողը եղաւ մեծամասնութիւնը, իմա՝ ժամանակի կառավարութիւնը, որովհետև Բօսնիայի-Հերցեգովինայի և Բուլղարիայի խնդիրները իր տուած որոշման տակ չմնացին մինչև վերջ. նրանք բռնեցին մի ուրիշ ուղի, որ իրերի ընթացքը բնական և անհրաժեշտ էին դարձրել: Նոյնը կարելի է ասել և՛ ներքին շատ խնդիրների նկատմամբ, որ ժամանակի կառավարութիւնը վճռուած համարեց, մեծամասնութեան քուէի վրայ կրթնելով, բայց այնպէս եղաւ:

Ներկայ օրերի մէջ՝ ապահովար քայլերու և պատմական խնդիրներին յաջողութեամբ դիմապրաւելու համար՝ անհրաժեշտ է « Օսմանեան առաջին պարլամենտ »-ի պատմութիւնը երբէք աչքից բաց չթողնել: Պատմութիւնից չեն օգտուում միայն պատմութիւն չունեցող ժողովուրդները. մինչդեռ պատմութիւնը հասունացած ժողովուրդների համար մի դպրոց է:

Եւ մի երկրի առաքինի քաղաքացին նա է, որ անցեալի մէջ եղած, կատարուած սխալները մատնանիշ է անում, քննութեան ենթարկում և այդ կերպով երևան բերում իր երկրի մէջ գոյութիւն ունեցող վերքերը ու նրանց պատճառները, — բուժումը այդ գնով միայն կարելի է անել, երբ, մանաւանդ, սխալների առաջ դրուած է ուղիղը, ճշմարիտը, այն՝ ինչոր համապատասխան և անչեղածելի է իր երկրին և այն ժողովրդին, որի անունով և՛ որի համար որ նա խօսում, գործում է:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանում ստացուած են հետևեալ գումարները.

ԿԱՆՅՈՒ Մ-ՈՒՆ	270	ՔՐ
ՊՈՒՔՐԵՇՈՒ	670	"
ՄԵՃՈՏԻՔՈՒ	75	"
ՔՐՕՍՏԵՆՃԵՐ	310	"
ՍՈՒՆԻՍՅՈՒ	460	"
ՓԱՐԻՉ մի բարեկամից	1000	"

(Շարունակելի)

ՄԵՐ ՀԱՍՅՆ Է M. BELLART — 24, Avenue du Parc de Montsouris 24, PARIS (France)